

1576


2(075)
U-15

зала
шкафъ
полка №

804

7. 8. 1910
11. 10. 1910

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ



ՀԱՄԱՐԱՆՈՒՆ ԴՈՐԱԳՈՅՆ ԿՐՈԳՐԻ

ՍԵՂԶԱԿ Թ. ԳՂ. ՍԱՀԱԿԵԱՆՅՑ

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ԴՈՏԻՆԵԱՆ
ԹԻՖԼԻՍ 1910

499/24


12-824a

2(075)
4-15

03 AUG 2009

Դ. ՏԱՐԻ
Ա. ՄԱԿ.

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ



ՀԱՄԱՅՈՒՆՆԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ԵՐԱԳՐԻ

ՍԱՀԱԿԻ Է. ԳԶ. ՍԱՀԱԿԵԱՆՆԵՐ

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵԱՆ
ԹԻՖԼԻՍ 1910

25 JUL 2013

1576

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց,
Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամե-
ծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ
Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:



39734-63

Ա.

Հ Ի Ն - Ո Ի Խ Տ


Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Ա. Ս Ա Ի Ո Ւ Ղ

1. ՍԱԽՈՒՂԸ ԹԱԳԱԽՈՐ Է ԴԱՌՆՈՒՄ

ա. Երբ Աամուէլը ծերացաւ, իւր որդիներին
հարայելի վրայ դատաւոր նշանակեց: Սրանք հօր
ճանապարհով չէին գնում, կաշառքներ էին վերց-
նում և օրէնքից դուրս գործեր կատարում: Սրա
համար ծերերը հաւաքուեցան Սամուէլի մօտ
Արիմաթեմ քաղաքում և ասացին. «Դու ծերա-
ցել ես. որդիքդ քո ճանապարհով չեն գնում.
մեզ մի թագաւոր տուր, ինչպիսին այլազգիներն
ունին, որ մեզ դատէ և պատերազմում առաջ-
նորդէ»: Նրանք կարծում էին՝ թշնամին նրա
համար է յաղթում, որ թագաւոր ունէ: Այս
բանը թէև դուր չեկաւ Սամուէլին, բայց և այն-
պէս խնդրեց Աստծուն այդ մասին: Աստուած ա-
սաց նրան. «Հնազանդիր ժողովրդի պահանջին և
նրան մի թագաւոր տուր»:

բ. Բենիամինի ցեղից մի մարդ՝ Կիս անու-
նով մի որդի ունէր՝ անունը Սաւուղ: Սա մի գե-
ղեցիկ մարդ էր: Մի անգամ Կիսի էջերը կորան:



Սաւուղը փնտռելու գնաց և հասաւ մինչև Արի-
մաթեմ: Հէնց որ Սամուէլը Սաւուղին տեսաւ,

Աստուած ասաց նրան. «Ահա սա է իմ ժողովըր-
դին կառավարողը»:

Այն ժամանակ Սամուէլն առաւ իւղի սրուա-
կը, ածեց նրա գլխին, համբուրեց և ասաց. «Աս-
տուած քեզ իւր ժողովրդին կառավարիչ է նշա-
նակում»: Սրանից ետոյ Աստուած Սաւուղին մի
ուրիշ սիրտ, ուրիշ հոգի տուաւ:

Սամուէլը հաւաքեց իսրայէլացիներին և
յայտնեց, որ Աստուած Սաւուղին թագաւոր է
ընտրել: Սաւուղը համեստութենից սկզբում
կարասի տակ թաք կացաւ, բայց վերջը ժողո-
վրդին ներկայացաւ: Նա ամենից բարձր էր—
միւսների հասակը հազիւ էր նրա ուսերին հաս-
նում: Ժողովուրդը շատ ուրախացաւ և ասաց.
«Կեցցէ թագաւորը»: Բայց նրան չուզողները
ժողրոմ էին և ասում. «Միթէ սա պիտի փրկէ
մեզ»: Սաւուղն այնպէս էր ցոյց տալիս իրան,
որպէս թէ չէ լսում:

Գ. Ամովնացիների թագաւորը պաշարեց իս-
րայէլացիների Յարիս քաղաքը և ասաց քաղա-
քացիներին. «Ես ձեր ամենի աջ աչքը պէտք է
հանեմ»: Յարիսացիները մարդ ուղարկեցին ի-
րանց եղբայր իսրայէլացիների մօտ և օգնու-
թիւն էին խնդրում: Սաւուղին էլ պատմեցին
այս բանը: Նա խիստ բարկացաւ, երկու եղն ա-
ռաւ. կտոր-կտոր արաւ. իսրայէլի քաղաքներն
ուղարկեց՝ ասելով. «Ով Սաւուղին և Սամուէլին

չի հետևի, նրա եզներն էլ այսպէս պատառ-պատառ կլինին»: Ժողովուրդը նոր թագաւորի շուրջը հաւաքուեց: Սաւուղը մարդ ուղարկեց Յաբի-սի բնակիչներին մօտ, որ նրանց ասեն. «Վաղը արևը տաքանալուն պէս ձեզ օգնութեան կգամ»: Յաբիսացիներ շատ ուրախացան: Սաւուղն առաւ օտեան զօրքը երեք զնդի բաժանեց, յարձակուեց ամոփնացիների վրայ և ջարդեց նրանց մինչև արևի տաքանալը:

Այն ժամանակ Սաւուղի մարդիկն առացին. «Մօտ բերէք թագաւորի ծաղրողներին, որ նրանց պատժենք»: Սաւուղը պատասխանեց. «Այսօր» երբ Աստուած մեզ յաղթութիւն է տուել, ոչ մի իսրայէլացի չպիտի մեռնի»: Սամուէլը Գաղզաղա հաւաքեց բոլոր իսրայէլացիներին և Սաւուղին թագաւոր օծեց: Նորընտիր Սաւուղ թագաւորը ժողովրդի հետ միասին ուրախանում էր:

2. ՍԱԻՈՒՂԻ ԱՆՆԱՅԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Նոր պատերազմ ծագեց փղշտացիների և իսրայէլացիների մէջ: Սամուէլը զօրք հաւաքեց և պիտի գար Գաղզաղա թագաւորի հետ: Սամուէլն ասաց թագաւորին. «Սպասիր ինձ այնտեղ, մինչև ես գամ և զոհ մատուցանեմ, որ Աստուած մեզ յաղթութիւն տայ»: Սաւուղը եօ-

թըն օր անհամբեր սպասում էր: Սամուէլն ուշացաւ: Ժողովուրդը սկսեց ցրուել: Թագաւորն, այս որ տեսաւ, ասաց. «Բերէ՞ք ողջակէզը, որ ես զոհեմ»: Բայց դեռ զոհը չվերջացրած՝ մարգարէն եկաւ:

Սամուէլը նեղացած ասաց. «Այդ ի՞նչ ես արել. միթէ դու մարգարէ ես—դու զոհելու իրաւունք չունիս, դու իմ իրաւունքը խլել ես»: Սաւուղը սկսաւ իրան արդարացնել և ասել. «Ես տեսայ, որ ժողովուրդն սկսեց հեռանալ. դու էլ ուշացար. փղշտացիներն ուզում էին յարձակուել, ուստի ողջակէզ արի»:

Սամուէլն ասաց Սաւուղին. «Դու անմիտ ես վարուել. դու Աստուծո պատուիրանիցն անցել ես. միթէ կարծում ես, որ Աստուած զոհը հնազանդութիւնից աւելի կտիրէ և որովհետեւ դու Աստուծո պատուիրանը չպահեցիր, այլևս թագաւոր չես լինի իսրայէլի վրայ»:

Սամուէլը հեռացաւ և մինչև իւր մահը՝ նրա երեսը չտեսաւ: Թէև նա հեռացած էր, բայց և այնպէս միշտ ցաւում էր Սաւուղի վրայ:

Բ. ՍԱԻՈՒՂ ԵՒ ԳԱԻԹ

3. ԴԱԻԹԻ ԹԱԳԱԻՈՐ ԸՆՏՐՈՒՒՄԸ

Աստուած ասաց Սամուէլին. «Մինչև երբ

տխրեա Սաւուղի համար. ես նրան այլ ևս չեմ սիրում: Լցրո՛ւ եղջիւրդ իւղով և գնա Բեթղեհէմ՝ Յեսսէի որդիներէց մինին թագաւոր եմ ընտրել»: Սամուէլը գնաց Բեթղեհէմ, հրաւիրեց Յեսսէին և իւր որդիներին զոհ մատուցանելու:

Որդիները տուն եկան: Սամուէլը նայեց մեծին, կարծում էր թէ սա պիտի լինի նոր թագաւորը: Բայց Աստուած ասաց. «Դու ոչ նրա մեծ հասակին նայիր և ոչ տեսքին: Ես մեծ հասակ ունեցողներին էլ չեմ սիրում: Բանը հասակի մէջ չէ, այլ՝ սրտի»:

Ետոյ Յեսսէն իւր եօթը որդւոցը Սամուէլի առաջով անցկացրեց: Մարգարէն պատասխանեց. «Աստուած սրանցից ոչ մինին էլ չէ ընտրել, ուրիշ որդի չունիս»:

Յեսսէն պատասխանեց. «Մի փոքրը ևս ունեմ, նա խաշներ է արածացնում»: Սամուէլն ասաց. «Մարդ ուղարկիր և կանչել տուր»:


Դաւիթն եկաւ—նա կարմրաբերեա էր. գեղեցիկ աչքեր ունէր և սիրուն հասակ: Աստուած ասաց. «Վեր կաց և օծիր սրան, ահա սա է իմ ընտրածը»: Սամուէլն առաւ եղջիւրը և օծեց նրան թագաւոր իւր եղբայրների մէջ:

Հէնց այդ օրից Աստծու հոգին Դաւիթի վրայ իջաւ:

4. ԴԱՒԻԹԸ ԳԱԼԻՍ Է ՍԱԽՈՒՂԻ ԱՐՔՈՒՆԻՔԸ

Աստծու հոգին Սաւուղից հեռացել էր -- չար ոգին տանջում էր նրան: Ծառաներն ասացին թագաւորին. «Քնարի վրայ ածող մի մարդ գտնենք, որ նուագէ և հանգստացնէ քեզ, երբ չար ոգին գայ»:

Սաւուղը պատասխանեց. «Եթէ գիտէք այդպիսի մարդ, կանչեցէք»: Ծառաներից մինը պատասխանեց. «Ես ճանաչում եմ Բեթղեհէմցի Յեսսէի փոքր որդուն. նա մի իմաստուն և քաջ երիտասարդ է. գիտէ քնարի վրայ ածել և Աստուած էլ նրան շատ է սիրում»: Սաւուղը մարդ ուղարկեց Յեսսէի մօտ և Դաւիթին իւր մօտ կանչեց:



Այսպէս Դաւիթը Սաւուղի մօտ եկաւ և ծառայում էր նրան: Սաւուղը շատ սիրեց նրան և իւր կապարճակիրը դարձրեց: Հէնց որ չար ոգին Սաւուղի վրայ էր գալիս, Դաւիթն առնում էր քնարը և երգում: Սաւուղն իսկոյն հանգստանում էր, երբ Դաւիթն սկսում էր երգել և քնար ածել:

5. Դ Ա Ի Ի Թ Ե Ի Գ Ո Ղ Ի Ա Թ

Փղշտացիները, երբ լսեցին իսրայէլի թագաւորի հիւանդութիւնը, զօրք հաւաքեցին և եկան Յուդայի երկիրը: Սաւուղը նոյնպէս զօրք հաւաքեց և բանակ ձգեց փղշտացիների հանդէպ: Փղշտացիների բանակից զուրս եկաւ մի հսկայ Գողիաթ անունով, որի հասակի երկայնութիւնը վեց կանգուն մի թիղ էր և ձայն տուաւ իսրայէլացիներին. «Ընտրեցէք ձեզնից մէկին ինձ հետ մենամարտելու»: Սաւուղը և իսրայէլացիները խիստ վախեցան:

Դաւիթ երեք մեծ եղբայրները Սաւուղի հետ բանակումն էին, իսկ ինքը տուն էր դնացել հօր ոչխարներն արածացնելու: Մի անգամ Յէսսէն ասաց Դաւիթին. «Առ այս տասն նկանները, տար


եղբայրներիդ և տես, ինչպէս է նրանց առողջութիւնը»: Երբ Դաւիթը եղբայրների մօտ եկաւ, Գողիաթը դուրս եկաւ բանակից և սկսու նախատել իսրայէլացիներին: Ոչ ոք չէր վստահանում նրա դէմ դուրս գալ—ձայնը լսելուն պէս ամենքն էլ փախչում էին: Դաւիթը, երբ այս բանը տեսաւ, ասաց. «Մի՞թէ մի մարդ չկայ, որ նրան սպանէ և իսրայէլին այս անպատուութիւնից ազատէ»: Ժողովուրդն ասաց. «Ով նրան սպանի, թագաւորի փեսան կդառնայ»: Դաւիթ այս խօսքերը Սաւուղին յայտնեցին. նա անմիջապէս թագաւորի մօտ կանչուեց:

Դաւիթն ասաց Սաւուղին. «Մի վախենար, թագաւոր, ես կմենամարտեմ նրա հետ»: Սաւուղը պատասխանեց. «Ի՞նչ մանուկ ես, փղշտացու հետ չես կարող պատերազմել»: Դաւիթը պատասխանեց. «Հօրս խաշներն արածացնելիս՝ երբ առիւծ կամ արջ էր գալիս և յափշտակում ոչխարներս, ընկնում էի նրանց ետեւից, ոչխարը խլում էի գազանների բերնից և իրանց էլ սպանում: Այն Աստուածը, որ ինձ առիւծից և արջից ազատեց, կազատէ և այս փղշտացուց»:

Սաւուղն ասաց Դաւիթին. «Գնա, Աստուածքեզ հետ»: Դաւիթը հովուական գաւազանը ձեռնառաւ. հինգ ողորկ քար դրաւ մազախի մէջ. պարսը վերցրեց և դիմեց դէպի փղշտացին:

Երբ այլազգին Դաւիթն տեսաւ, ասաց. Մի՞

Թէ ես շուն եմ, որ դու գաւազանով և քարով ես
գալիս ինձ վրայ: Դաւիթը պատասխանեց. «Դու
գալիս ես ինձ վրայ սրով, նիզակով և վահանով,



իսկ ես՝ իսրայէլի Աստծու անունով: Աստուած
քեզ այսօր իմ ձեռք կ'յանձնէ»: Դաւիթը մաղա-
խից մի քար հանեց. զբաւ պարսի մէջ և ձգեց

դէպի ալլազգին: Քարը ճակատին դիպաւ և հսկան
գետին փռուեց: Բայց որովհետեւ Դաւիթը սուր
չունէր, վազեց դէպի փղշտացին. հանեց նրա
սուրը և գլուխը կտրեց: Երբ փղշտացիները տե-
սան Գողիաթի մահը, փախան:

6. ՍԱԻՈՒՂՆ ԱՏՈՒՄ, ԻՄԿ ՅՈՎՆԱԹԱՆԸ ՍԻ- ՐՈՒՄ Է ԴԱԻԹԻՆ

Ա երբ Դաւիթը Գողիաթի գլուխը կտրեց,
Թագաւորի զօրավար Աքնննորը նրան Սաւուղի
մօտ տարաւ և մօտիկ ծանօթացրեց Թագաւորի
հետ: Այս դէպքից ետոյ Թագաւորի որդի Յովնա-
թանը Դաւիթին սրտով սիրեց և ընկերական դաշը
կապեց: Սաւուղը չթողեց Դաւիթին, որ տուն
դառնայ, այլ՝ իրա մօտ պահեց և զօրքի վրայ
հրամանատար նշանակեց: Ժողովուրդը սիրում
էր Դաւիթին: Գողիաթին սպանելուց յետոյ՝ երբ
Դաւիթը վերադառնում էր փղշտացիների պա-
տերազմից, կանայք դուրս էին գալիս Դաւիթի
առաջ թմբուկներով, ծնծղաներով, պարում, եր-
գում և ասում էին. «Սաւուղը հազարին սպա-
նեց, իսկ Դաւիթը՝ բիւրին»: Այս խօսքերը դուր
չեկան Թագաւորին, նախանձեց և ասաց. «Էլ ի՞նչ
է պակաս նրան՝ բացի իմ Թագաւորութիւնից»:

Հետեւեալ օրը Սաւուղը նախանձից հիւան-

դեցաւ: Դաւիթն սկսեց քնար ածել: Սաւուղը վեր առաւ գեղարդը և ձգեց Դաւիթի ետեից այն մտքով, որ նրան պատին մեխէ: Բայց նա խոյս



տուաւ և գեղարդը պատի մէջ ցցուեց: Սաւուղը վախենում էր, ուստի Դաւիթին իրանից հեռացնելու համար հազարապետի պաշտօն տուաւ: Դաւիթն

ազդոյշ էր վարվում ամեն մի քայլափոխում:

Սաւուղի աղջիկը սիրում էր Դաւիթին: Եւ որովհետեւ թագաւորը խոստացել էր նրան իրան փեսայ դարձնել, ասաց. «Դաւիթին փեսայ կդարձնեմ և փղշտացւոց դէմ պատերազմի կուղարկեմ, այնտեղ էլ կսպանուի»: Սաւուղը պատուիրեց իւր ծառաներին, որ ծածուկ Դաւիթի հետ այսպէս խօսեն. «Թագաւորը և նրա բոլոր մարդիկը քեզ շատ են սիրում, եկ և նրան փեսայ դարձիր»: Այսպէս էլ արին ծառաները: Դաւիթն ասաց. «Ես մի աղքատ մարդ եմ»: Ծառաները պատասխանեցին. «Թագաւորը քեզնից ոչինչ չի պահանջում՝ բացի հարիւր փղշտացու զլխից»: Նրա միտքն այն էր, որ Դաւիթը թշնամու հետ պատերազմելիս՝ սպանուի: Դաւիթն իսկոյն վեր կացաւ, փղշտացիների դէմ գնաց և երկու հարիւր մարդ սպանեց: Թագաւորը իւր Ս'նդբող աղջկան Դաւիթին տուաւ: Սաւուղը նկատեց, որ Աստուած Դաւիթի հետն է, աւելի ևս վախեցաւ և մինչև իւր մահը թշնամացաւ նրա հետ:

բ. Սաւուղը, երբ տեսաւ, որ իւր նպատակին չհասաւ, նոր միջոց մտածեց—սկսաւ իւր որդուն զրգուել Դաւիթի դէմ:

Յովնաթանն այս բանը յայտնեց Դաւիթին և նա էլ թաք կացաւ: Սրանցից ետոյ Յովնաթանը խօսեց հօր հետ և ասաց. «Յանցանք մի գործիր, հայր, Դաւիթն արդար է. նա քեզ համար իւր

անձը վտանգի ենթարկեց և սպանեց փղշտացուն»։ Սաւուղը լսեց իւր որդուն, երդուեց, որ Դաւթի մահն այլ ևս չի ցանկայ։ Յովնաթանը յայտնեց Դաւթին այս բանը և նրան հօր մօտ բերաւ։ Դաւթը դարձեալ այնպէս էր թագաւորի հետ՝ ինչպէս առաջ։

Նոր պատերազմ։ Դաւթը դուրս եկաւ փղշտացիների դէմ և յաղթեց։ Չար ոգին դարձեալ յայտնուեց թագաւորին. վեր առաւ գեղարդը և կամենում էր Դաւթին պատին մեխել։ Նա դարձեալ խոյս տուաւ և գեղարդը մտաւ պատի մէջ։ Դաւթը միևնոյն գիշերը փախաւ պալատից։ Սաւուղը մարդիկ ուղարկեց, որ գիշերով նրա տունը շրջապատեն և առաւօտեան սպանեն։

Մեղքողը յայտնեց Դաւթին եղբւրթիւնը և ասաց. «Եթէ դու այս գիշեր քո կեանքը չապաւենս, առաւօտեան կենդանի չես մնայ»։ Կինը մարդուն պատուհանից վայր թողեց.— Դաւթն անյայտացաւ։ Ետոյ Մեղքողը պաճուճապատան շինեց. դրաւ անկողնում. գլուխը այծի մորթով պատեց և ծածկեց շորերով։ Սաւուղը դեսպաններ ուղարկեց, որ Դաւթին բռնեն։ Մեղքողը պատասխանեց. «Հիւանդ է»։ Սաւուղը կրկին անգամ մարդ ուղարկեց և ասաց. «Մահճով ինձ մօտ բերէք, որ սպանեմ նրան»։ Երբ դեսպաններն եկան, պաճուճապատանը անկողնում դրած էր։ Իրողութիւնը թագաւորին յայտնեցին։ Սա-

ւուղն ասաց իւր աղջկան. «Ինչո՞ւ խաբեցիր ինձ և փախցրիր իմ թշնամուն»։ Մեղքողը պատաս-



խանեց. «Նա ինձ ասաց, որ եթէ չես թոյլ տայ, կսպանեմ»։



դ. Դաւիթը մի տեղից միւսը թափառելով՝ վերջապէս եկաւ Յովնաթանի մօտ և զանգատտուեց. «Ի՞նչ յանցանք եմ գործել քո հօր դէմ, ինչո՞ւ է իմ ետեից ընկել»: Յովնաթանը պատասխանեց. «Դու չես մեռնի, ես կխօսեմ հօրս հետ: Դու թաք կացիր դաշտում մի քարի տակ. երեք օրից ետոյ քեզ իմաց կտամ, թէ բանն ինչպէս է վերջացել»:

Հետեւեալ օրը Սաւուղը Յովնաթանի և զօրավար Աքննների հետ սեղան էին նստած: Դաւիթի մասին խօսք եղաւ: Յովնաթանը նրա օգտին խօսեց: Սաւուղը բարկացաւ և ասաց. «Ուարդախ, ես գիտեմ, որ դու Յեսսէի որդու հետ դաշնակից ես. ամօթ քեզ. քանի որ նա կենդանի է, քո թագաւորութիւնը հաստատ չէ. մարդ ուղարկիր և բերել տո՛ւր նրան—նա պէտք է մեռնի»: Սաւուղը բարկացաւ և այս անգամ գեղարդը Յովնաթանի վրայ ձգեց՝ նրան սպանելու մտքով: Յովնաթանը վեր կացաւ սեղանից. դուրս եկաւ և ամբողջ օրը ոչինչ չկերաւ ու մտածում էր միայն Դաւիթի վրայ:

Առաւօտեան Յովնաթանը դաշտ գնաց և ամեն բան յայտնեց Դաւիթին: Երկուսն էլ զրկեցին իրար և լաց էին լինում: Նրանք երդուեցին հաւատարիմ լինել միմեանց: Յովնաթանն ասաց. «Գնա՛ խաղաղութեամբ, ինչ որ մենք Աստծու անունով երդուեցինք, թող յաւիտեան անխախտ մնայ»:


Յովնաթանը ետ դարձաւ քաղաք, իսկ Դաւիթը գնաց անապատ:

Դ. ԴԱՒԻԹԻ ՄԵԾԱՀՈԳՈՒԹԻԻՆԸ ԴԷՊԻ ՍԱՒՈՒՂ

ա. Սաւուղն իմացաւ, որ Դաւիթը Գառնայի անապատումն է: Առաւ երեք հազար զօրք ու գնաց Դաւիթին փնտռելու: Այն անապատում մի մեծ այր կար: Սաւուղը մտաւ հանգստանալու, իսկ Դաւիթը իւր մարդկանց հետ արդէն այրի ներսումն էր: Դաւիթի մարդիկն ասացին. «Ահա այս այն օրն է, որ Աստուած թշնամուն քո ձեռն է մատնում»: Դաւիթը չթողեց, որ թագաւորին սպանեն, այլ ծածուկ կտրեց նրա փեշի ծայրը:

Սաւուղը երբ զարթեց, դուրս եկաւ այրից և սկսաւ իւր ճանապարհը շարունակել: Նրանից ետոյ դուրս եկաւ Դաւիթն ու սկսաւ Սաւուղի ետեից ձայն տալ. «Ի՛մ տէր թագաւոր»: Սաւուղը զարմացած ետ նայեց: Դաւիթն ասաց. «Այսօր Աստուած քեզ իմ ձեռը մատնեց այրի մէջ՝ բայց ես քո կեանքը խնայեցի. տես, հայր իմ, ահա քո փէշի ծայրն իմ ձեռումն է: Թող Աստուած դատաւոր լինի իմ և քո մէջ, ես իմ ձեռը քեզ վրայ չեմ բարձրացնի»:

Սաւուղն սկսաւ բարձր ձայնով լաց լինել և ասել. «Դու ինձնից արդար ես. դու ինձ բա-



ըի հատուցիր, իսկ ես քեզ՝ չար. Աստուած դրա փոխարէն քեզ կվարձատրէ—ես գիտեմ՝ դու մի օր իսրայէլի թագաւորը պիտի դառնաս»:

Սաւուղը տուն դարձաւ, իսկ Դաւիթը իւր մարդկանց հետ մնաց անապատում:

8. ՍԱԽՈՒՂԻ ՄԱՀԸ

Սամուէլը մեռաւ: Բոլոր իսրայէլացիները սուգ արին նրա վրայ և թաղեցին Արիմաթէմում:

Փղշտացիները կրկին անգամ պատերազմ յայտնեցին իսրայէլացիներին: Իսրայէլացիները փախան և Գեղըռա լեւան մօտ մեծ ջարդ ստացան: Թշնամին շրջապատեց Սաւուղին և նրա որդւոց: Սաւուղը ծանր կերպով վիրաւորուեց:

Այն ժամանակ թագաւորն ասաց իւր կապարճակիրին. «Հան քո սուրը և սպանիր ինձ, որ փղշտացիների ձեռը չընկնեմ»: Կապարճակիրը հրաժարուեց: Սաւուղը ինքն առաւ իւր սուրը և ընկաւ նրա վրայ: Երբ կապարճակիրը տեսաւ, որ Սաւուղը մեռաւ, ինքն էլ իւր սրի վրայ ընկաւ և ինքնասպան եղաւ: Յովնաթանը, իւր երկու եղբայրները և հետն եղած բոլոր մարդիկն ընկան պատերազմի մէջ:

Սաւուղի մահուանից երեք օր ետոյ՝ մի ամաղեկացի Դաւիթի մօտ եկաւ ու ասաց. «Իսրայէլի բանակիցն եմ ազատուել. ժողովուրդը փախաւ և Սաւուղն ու Յովնաթանն սպանուեցին»: Դաւիթն ասաց. «Ո՞րտեղից գիտես, թէ Սաւուղը և Յովնաթանը մեռան»: Ամաղեկացին պատասխանեց. «Գեղըռայ լեռների վրայ էի. Սաւուղն ընկած էր նիզակին. թշնամու հեծելազօրը գիւմում էր դէպի նա. Սաւուղն ասաց—սպանիր

ինձ: Մօտ գնացի, սպանեցի նրան, վեր առայ
թագն ու ապարանջանը և ահա քեզ եմ բերել»: **Դաւիթը** բարկացաւ. «Դու ի՞նչպէս վստահացար



Տիրոջ օծեալի վրայ ձեռք բարձրացնել»: Այս ա-
ռաց և նշան արաւ մարդկանց, որ սպանեն ա-
մադեկացուն և սպանեցին: **Վր**

Դաւիթն սկսաւ սուգ անել Սաւուղի, Յով-
նաթանի և բոլոր իսրայէլի ժողովրդի վրայ:

Գ. Գ Ե Ի Թ

9. ԴԱԻԻԹԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԹԱԳԱՆՈՐ

Սաւուղի մահուանից ետոյ **Դաւիթը** իւր
մարդկանց հետ գնաց Քերրոն: Յուդայի տան
մարդիկը նրան թագաւոր օծեցին միայն Յու-
դայի տան վրայ: Իսկ Սաւուղի զօրավար Աբեն-
ները նրա որդի Յնքուլթէին թագաւորեցրեց
միւս ցեղերի վրայ: **Դաւիթ** և Սաւուղի տան մէջ
երկար ժամանակ պատերազմներ եղան: **Դաւիթ**
տունը քանի գնում, զօրանում էր, իսկ Սաւու-
ղինը՝ տկարանում էր: Յերուսթէին քնած ժա-
մանակ սպանեցին և գլուխը կտրելով՝ **Դաւիթ**
մօտ բերին: **Դաւիթը** բարկացաւ և ասաց. «Դուք
արդար մարդ էք սպանել և հրամայեց մարդաս-
պաններին մահու պատիժ տալ: Այնուհետև իս-
րայէլի բոլոր ցեղերը Քերրոն եկան և **Դաւիթին**
թագաւոր օծեցին բոլոր իսրայէլի վրայ:

Թէև Յեսուն Քանանը նուաճել էր, բայց
Երուսաղէմ քաղաքը, ուր Երուսացիք էին կենում,
իւր անառիկ լինելու պատճառով, դեռ ևս չէր
նուաճուած: Այս պատճառով թագաւորը գնաց
գէպի Երուսաղէմ երուսացւոց գէմ. առաւ քա-

դաքը, Սիօն լեռը ու նրա վրայի աշտարակը, ուր և բնակուեց: Աշտարակն անուանեց Դաւթի քաղաք և այնտեղ մի փառաւոր տուն շինեց:



Սրանից ետոյ Սելով գնաց, մեծ հանդէսով տապանակ ուխտին Սիօնի աշտարակը տեղափոխեցին: Թագաւորը ղետացիներէից մի քանիսին

պաշտօնեայ նշանակեց ուխտի տապանակին ծառայելու, որոնք երգով և քնարով օրհնում էին և փառաբանում Աստծուն: Նմանապէս քահանաներ նշանակեց Ահարոնի ցեղից, որոնք ամեն օր ող-



Ս
Դ
Վ
Ե
Մ
Ե
Ն

ջակէզ պիտի մատուցանէին: Բացի սրանից աստուածաբաշտութեան կարգ սահմանեց և ինքն էլ մի քանի սաղմոսներ յօրինեց:

Նրա թագաւորութիւնը ընդարձակուեց Միջերկրական ծովից մինչև Եփրատ և Դամասկոսից մինչև Եգիպտոս: Դաւթի անունը հռչակուեց



Փահանջապետ

ուզում եմ քեզ ողորմութիւն անել՝ քո հայր Յովնաթանի սիրու համար. քեզ կտամ Սաւուղի բոլոր արտերը. դու ամեն օր իմ սեղանից կճաշես»: Այսպէս չմոռացաւ Դաւիթը իւր սիրելի Յովնաթանին:

բոլոր երկրներում. հեթանոսները դողում էին նրա անունը լսելիս: Նա դատաւորներ ևս նշանակեց երկրի մէջ:


Այս ամենից ետոյ Դաւիթը հարցրեց. «Արդեօք Սաւուղի տանից որ և է ժառանգ չէ մնացել»: «Յովնաթանից մի կաղ որդի է մնացել», ասաց նրա ծառաներից մինը: Իսկոյն Դաւիթը մարդ ուղարկեց նրա ետևից և բերել տուաւ իւր մօտ: Երբ Յովնաթանի որդի Սամիիքոսթէն Դաւթի մօտ եկաւ, երեսի վրայ ընկաւ: Դաւթն ասաց նրան. «Մի վախիր, ես

10. ԴԱՒԻԹԸ ՄԵՂԱՆԶՈՒՄ Է

Մի անգամ Դաւիթը իւր Յովնա զօրավարին ամսնացինների գէմ ուղարկեց, որ նրանց գլխաւոր քաղաքը՝ Ռաբաթաւը պաշարեն, իսկ ինքը մնաց Երուսաղէմում: Մի օր թագաւորը կտրի վրայ ման էր գալիս՝ տեսաւ Ուրիայի կին Բեթսաբէին: Ուրիան Յովաբի հետ պատերազմ էր գնացել: Դաւիթը Յովաբին մի նամակ գրեց, որի մէջ ասում էր. «Ուրիային պատերազմի վտանգաւոր տեղն ուղարկիր, իսկ դու դարձիր, թող նա սպանուի»: Յովաբն էլ այդպէս արաւ: Երբ Ուրիայի կինը ամուսնու մահուան լուրն առաւ, սկսաւ սուգ անել: Սգի օրերն անցնելուց ետոյ՝ Դաւիթը պսակուեց նրա հետ:

Այս բանն Աստծուն դուր չեկաւ, ուստի Նաթան մարգարէին նրա մօտ ուղարկեց: Սա էլ թագաւորի մօտ եկաւ և հետեւալ առակը պատմեց. «Մի քաղաքում կենում էին երկու մարդիկ—մինը հարուստ, իսկ միւսը՝ աղքատ: Հարուստն ունէր շատ հօտեր, իսկ աղքատը՝ միմիայն մի գառը: Աղքատը շատ էր սիրում գառանը — իւր հետն էր ուտեցնում, խմացնում և իրա գոգում էլ քնացնում: Մի օր հարստի մօտ հիւր եկաւ: Սա աղքատից նրա գառը խլեց և հիւրին պատուեց»: Դաւիթը բարկացաւ այդ բանի վրայ. զարմացաւ, որ իւր թագաւորութեան

մէջ աշխարհի անարդարութիւն է պատահել, ուստի ասաց Նաթանին. «Այդ մարդը մահու պատժի արժանի է»: Այն ժամանակ Նաթանն ասաց



Դաւիթին. «Այդ մարդը դո՛ւ ես—դու խլեցիր Ուրիայի կնոջը, իրան էլ ամուսնացիների սրով սպանել տուիր: Դրա համար Աստուած այսպէս է ասում—քո տանից քո գէմ անբաղտութիւն կը-

հանեմ. դու ծածուկ չարութիւն գործեցիր, իսկ ես քեզ յայտնի կերպով կպատժեմ ամբողջ իսրայէլի առաջ»: Դաւիթը զգաց իւր սխալը և ասաց Նաթանին. «Ես մեղաւոր եմ Աստծու առաջ»: Այս ասաց ու գետնի վրայ ընկաւ և զղջում էր: Նաթանն ասաց. «Վեր կաց, Աստուած ներեց քո յանցանքը—դու չես մեռնի»: Մարգարէն տուն գնաց: Դրանից ետոյ Բերսաբէն մի որդի ունեցաւ, որին Սողոմոն անուանեցին: Դաւիթը Նաթանին յանձնեց Սողոմոնի կրթութիւնը:

11. Ա Բ Ի Ս Ո Ղ Ո Մ

ա. Իսրայէլացիների մէջ Դաւիթի որդի Արիսողոմի նման գեղեցիկ մարդ չկար: Արիսողոմի ամենագեղեցիկ զարդարանքը նրա գլխի մազերն էին: Սա առաւօտները վաղ վեր էր կենում և կանգնում քաղաքի դրանը: Թագաւորի մօտ գանգատի եկողներին՝ դուր գալու համար՝ ասում էր Արիսողոմը. «Դու արդար ես, բայց ո՞վ կայ այնտեղ, որ քեզ պաշտպանէ: Երանի՜ ինձ դատաւոր նշանակէին՝ ես գիտէի թէ ի՞նչպէս կպաշտպանէի ամենին»: Այս ձևով Արիսողոմը զբաւեց իսրայէլացիների սիրտը:

Երբ նրա համակրողների թիւն այնքան բազմացաւ, որ նա կարող էր ապստամբուել Դաւ-

թի դէմ, ասաց. «Թոյլ տո՛ւր ինձ, հայրիկ, որ Քերբոն ուխտ գնամ»: Թագաւորն ասաց. «Գնա՛ խաղաղութեամբ»: Արիստոգոմի առաջուց մարդ էր ուղարկել իսրայէլի բոլոր քաղաքներն ասելու. «Երբ փողի ձայնը լսէք, ասացէ՛ք Արիստոգոմը թագաւոր է դառել»: Արիստոգոմը Քերբոն գնաց. մեծ բազմութիւն էր հետեւում նրան:

Երբ Դաւթին իմաց տուին որդու ապստամբութիւնը, Երուսաղէմում եղող ծառաներին ասաց. «Վեր կացէ՛ք փախչենք Արիստոգոմի երեսից»: Թագաւորը քաղաքից ոտով փախաւ իւր ծառաների հետ. նրան հետեւում էր մեծ բազմութիւն և դառն կերպով լաց էին լինում: Դաւթն անցաւ Կնդրոնի վտակը և լալով բարձրացաւ Չիւննեաց լեռուր: Մաւուդի տնից մի մարդ՝ Սնւէի անունով, Դաւթին անիծում էր. քարեր էր արձակում վրան և ասում. «Դո՛ւրս, դո՛ւրս, Աստուած քո թագաւորութիւնը յանձնեց Արիստոգոմին, այժմ դո՛ւ ես անբախտութեան մէջ»: Արեստան բարկացաւ և ասաց. «Ի՞նչպէս է համարձակում նա իմ տէր թագաւորին այդպէս անպատուել, իրաւունք տո՛ւր, նրա գլուխը կտրեմ»: Թագաւորն ասաց. «Թո՛ղ, այդ Աստծու կամքն է: Հարազատ որդիս իմ ետևիցն է ընկել, ի՞նչ զարմանալու բան կայ, եթէ օտար Սեմէին այդպէս է վարւում»: Արիստոգոմը մտաւ Երուսաղէմ և առաւ այն բոլորն, ինչ որ հօրն էր պատկանում:

Ը. Սրանից ետոյ Արիստոգոմը իւր մարդկանց հետ Յորդանանն անցաւ՝ հօրը հալածելու համար: Դաւթին իւր մօտ եղած զօրքը կարգադրեց և ասաց. «Ես ևս ձեզ հետ կամենում եմ թշնամու դէմ պատերազմի դուրս գալ»: Ժողովուրդը պատասխանեց. «Դու մի՛ արի. քո կեանքը մեզ համար տասն հազար մարդու հաւասար է»: Զօրքը գնաց, իսկ Դաւթը Յովաբին, Արեստային և բոլոր գլխաւորներին պատուիրեց ու ասաց. «Իմ սիրու համար խնայեցէ՛ք Արիստոգոմին»: Եփրեմի անտառում իրար պատահեցին: Դաւթի զօրքը յաղթեց: Արիստոգոմը ջորու վրայ նստած փախաւ և երբ մի մեծ կաղնու խիտ ճիւղերի տակովն անցնում էր, մագերը ճիւղերի մէջ խճճուեց, մնաց կախ ընկած, իսկ ջորին անցաւ, գնաց: Երբ այս բանը Յովաբին իմաց տուին, վեր առաւ երեք զեղարդ և խրեց Արիստոգոմի սիրտը»:

Աւետաբեր եկաւ Դաւթի մօտ պատերազմի դաշտից և յայտնեց նրան յաղթութեան լուրը: Դաւթը հարցրեց. «Արիստոգոմ պատանին ո՞ղջ է», երբ տեղեկացաւ, լաց եղաւ և ասաց. «Որդեանկ իմ Արիստոգոմ, Արիստոգոմ որդեանկ իմ, երանի՛ թէ ես մեռնէի քո փոխարէն, որդեակ իմ Արիստոգոմ»:

Յուդայի տան մարդիկը Դաւթի մօտ դեսպաններ ուղարկեցին և ասացին. «Վերադարձիր Երուսաղէմ դո՛ւ էլ, քո զօրքն էլ»: Նրանք Դաւ-



Թին զիմաւորելու համար մինչև Յորդանան գնացին: Սեմէին ևս եկաւ դրանց հետ, թագաւորի ոտներն էր ընկնում և ասում. «Մի՛ յիշիր իմ յանցանքը, ներիր»: Արեստան ասաց. «Ոչ, նա

պէտք է մեռնի, Աստծու օծեալին անիծել է»: Դաւիթը պատասխանեց. «Այսօր ոչ ոք չպիտի մեռնի, երբ ես իսրայէլի վրայ նորից թագաւոր եմ»: Դաւիթը երդուեց Սեմէին և ասաց. «Դու չես մեռնի»: Դաւիթը դարձաւ Երուսաղէմ:

12. ԴԱՎԻԹ ԵՒ ՄԱՀԸ

Երբ Դաւիթը ծերացաւ, Երուսաղէմ ժողովեց երկրի իշխաններին, դատաւորներին, զինուորականներին ու ասաց. «Ժողովուրդ, ինձ լսիր, ես մտադիր էի Աստծու համար մի տուն շինել, որպէսզի ուխտի տապանակն այնտեղ գնեմ: Բայց Աստուած իւր ծառայ Նաթանի բերանով ասաց—ինձ համար դու չես կարող տուն շինել, զինուոր մարդ ես, շատերի արիւնն ես թափել: Երբ կմեռնես, այդ բանը քո որդի Սողոմոնը կկատարէ: Աստծու պատուիրանները պահեցէք, որ այս գեղեցիկ երկիրը ժառանգէք: Իսկ դու՝ իմ Սողոմոն որդի, ճանաչիր քո հօր Աստծուն և ծառայիր նրան ամբողջ սրտով: Աստուած քեզ ընտրեց իւր համար տուն կառուցանող: Ես մեռնում եմ, բայց մխիթարուիր, մի՛ վախենայ, իմ Աստուածը քեզ հետ կլինի»:

Դաւիթը ցոյց տուաւ իւր որդի Սողոմոնին տաճարի նախագիծը և ետոյ շարունակեց ժողո-

վրդեան հետ խօսել. «Աստծու տուն կառուցանելը շատ մեծ գործ է. ես իմ կարողութեան չափ ոսկի, արծաթ, թանկագին քարեր, երկաթ, փայտ և մարմար եմ ժողովել: Իսկ ձեզնից ո՞վ է յօժար Աստծու տան համար կամաւոր նուէր տալու»: Ամենքն էլ իրանց կարողութեան չափ ազատ կամքով նուէրներ արին: Դաւիթը շատ ուրախացաւ: Ժողովուրդը գոհանում էր Աստծուց. երկրպագութիւն էր տալիս. աղօթում և ողջակէզ մատուցանում: Քահանայապետն էլ վեր առաւ իւղի եղջիւրը. Սողոմոնին թագաւոր օծեց. փողերը փչում էին, իսկ ժողովուրդն աղաղակում էր. «Յաջողութիւն Սողոմոն թագաւորին»:

Շատ չանչաւ՝ որ հին թագաւորը մեռաւ և թաղուեց Դաւիթի քաղաքում: Նա թագաւորեց իսրայէլի վրայ քառասուն տարի:

Գ. ՍՈՂՈՄՈՆ

13. ՍՈՂՈՄՈՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐ

ա. Սողոմոնը սիրում էր Աստծուն և իւր հօր ճանապարհովն էր գնում: Երբ նա մի անգամ Գառաւոնում գոհ էր մատուցանում, Աստուած երազում երևաց և ասաց. «Խնդրիր ինձնից ինչ որ կամենում ես»: Սողոմոնը պատասխանեց.

«Տէր Աստուած, դու թագաւորեցիր քո ծառային իմ հայր Դաւիթի տեղը. ես մի փոքր տղայ եմ. չգիտեմ ոչ բարին և ոչ չարը. տո՛ւր ինձ իմաստուն սիրտ՝ քո ժողովուրդը արդարութեամբ կառավարելու»: Աստուած այս խօսքերը հաւանեց: Նա ասաց. «Որովհետեւ դու ինձնից երկար կեանք և հարստութիւն չխնդրեցիր, այլ միմիայն իմաստութիւն, այս պատճառով տալիս եմ քեզ ոչ թէ միայն քո խնդրածը, այլև հարստութիւն և փառք: Եթէ դու իմ պատուիրանները պահես, ինչպէս քո հայր Դաւիթը, քեզ երկար կեանք ևս կտամ»:

բ. Այդ օրերում երկու կին թագաւորի մօտ գանգատի եկան: Նրանցից մինն ասաց. «Ես մի որդի ծնայ: Երեք օրից ետոյ նա ևս մի որդի ունեցաւ: Մենք միայնակ էինք—բացի մեզնից ոչ ոք չկար տանը: Այս կինը գիշերը ծիծ տալիս՝ երեխայի վրան պառկեց ու խեղդեց նրան: Կէս գիշերին վեր կացաւ և ծածուկ փոխեց իմ կենդանի որդուն իւր խեղդուածի հետ: Առաւօտը վեր կացայ տղային ծիծ տալու, տեսայ որ իմ որդին չէր»: Իսկ միւս կինն ասաց. «Այդպէս չէ, կենդանին իմն է, իսկ մեռածը նրանն է»:

Աստուած Սողոմոնին իմաստութիւն տուաւ. նրանց դատաստանը կտրելու—թագաւորն ասաց. «Սուր բերէք ինձ մօտ. կէս արէք կենդանի երեխային—կէսը տուէք մինին, կէսը միւսին»:

Կանանցից առաջինն ասաց թագաւորին. «Մի սպանէք»: Իսկ միւսը պնդում էր. «Ո՛չ ինձ լինի, ո՛չ նրան, թող կտրեն»: Թագաւորն ասաց.



«Առաջին կնոջը տուէք կենդանի երեխային, որովհետեւ նա է հարազատ մայրը»: Այս դատաւարանը յայտնի եղաւ բոլոր իսրայէլի մէջ:

Բացի հարստութիւնից, Աստուած Սողոմոնին մեծ իմաստութիւն ևս տուաւ: Նա 3,000 առակ 1,005 երգ գրեց: Երկրիս բոլոր ծայրերից մարդիկ գալիս էին նրա իմաստութիւնը լսելու:


14. ՍՈՂՈՄՈՆԻ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

ա. Սողոմոնը մարդ ուղարկեց Տիւրոսի Զիրամ թագաւորին ասելու. «Դու գիտես որ իմ հայրը պատերազմների պատճառով չկարողացաւ Աստծու համար տուն շինել, այդ գործը ինձ յանձնեց: Խնդրում եմ հրաման տաւ իմ ծառաներին՝ Լիբանանի անտառներից տաճարի համար եղևիններ կտրել, դրա փոխարէն ես կվճարեմ քեզ ցորէն, գինի և իւղ»: Քիրամը կատարեց նրա ցանկութիւնը: Երկու թագաւորները բարեկամացան իրար հետ:

Սողոմոնի թագաւորութեան չորրորդ տարումը Մորէա լեռան վրայ տաճարի հիմքը դրուեց—80 ոտնաչափ երկարութիւն, 20 ոտնաչափ լայնութիւն և 30 ոտնաչափ բարձրութիւն ունէր տաճարը: Տունը ներսից ամբողջապէս մաքուր ոսկէ թիթեղով պատեց:

Տաճարը բաժանուած էր երկու մասի--Սըրքութիւն և Սըրքութիւն Սըրքոց: Տապանակ ուխտին գրին Սըրքութիւն Սըրքոցում, իսկ Սըրքութիւնում՝

U. S.



Սողոմոնի տաճարի լատակագիծը:

Ս. Ս. Սրբութիւն Սրբոց: Ս. Սրբութիւն: Գ. Գաւիթ: Գ. Տապա-
նակ տխտի: Զ. Խնկոց: Զ. Առաջադրաց սեղան: Է. Սիներ: Է.
Աշտանակներ: Ը. Երջապատ: Ը. Վերի հարկի մուտքը: Թ. Սե-
նեակներ:

խնկոցը, առաջաւորաց սեղանը և 10 հատ ոսկէ
աշտանակներ: Տաճարի շուրջը Սողոմոնը երկու
գաւիթ շինեց — արտաքինը ժողովրդի համար, իսկ
ներքինը՝ քահանաների: Այստեղ էր դրած զոհի
սեղանը և պղնձէ աւազանը, որպէսզի քահանա-
ները լուսացուեն: Եօթը տարուց ետոյ տաճարի
շինութիւնն աւարտեցին:

Բերբ շինութիւնը վերջացրեց Սողոմոնը, Երուսաղէմ հրաւիրեց ժողովրդին: Քահանաներն ուխտի տապանակը և սրբազան անօթները Սիօնի վրայից տաճար տեղափոխեցին:

Սողոմոնը և ժողովուրդը հետևում էին քահանաներին: Երբ ուխտի տապանակը սրբութիւն սրբոցում դրին, թագաւորը չոքեց Տիրոջ սեղանի առաջ և այսպէս աղօթեց. «Տէր, իսրայէլի Աստուած, երկինքը և երկնքի երկինքը բաւական չեն քեզ պարունակելու, ո՛ւր մնաց այս փոքրիկ տունը: Լսիր քո ծառային. լսիր քո խառնէլ ժողովրդին. ողորմած եղիր դէպի նա նեղութեան ժամանակ: Եթէ այլազգի ևս դայ այստեղ աղօթելու, նրան էլ լսիր: Եթէ ժողովուրդը քո դէմ մեղանչի և ուղղուած սրտով դառնայ քեզ, նրա խնդրուածը մի՛ մերժիր»:

Աղօթքը վերջացնելուց ետոյ՝ Սողոմոնը վեր
վազաւ և օրհնեց ժողովրդին: Թագաւորը ժողո-
վըրդի հետ շնորհակալութեան զոհ բերին Ասա-
ծուն: Սողոմոնը եօթն օր և եօթը գիշեր տօն

կատարեց: Ամենքն օրհնում էին թագաւորին և փառաբանում Աստծուն:

15. ՍՈՂՈՄՈՆԻ ՓԱՌՔԸ ԱՆԿՈՒՄԸ ԵՒ ՄԱՀԸ:

ա. 1. Սողոմոնը եղևնու փայտից իւր համար մի պալատ ևս շինեց. 2. Ամուսնացաւ Փարաւոնի աղջկայ հետ—մի պալատ էլ նրա համար շինել տուաւ. 3. Շինեց նաև մի դատաստանատուն. 4. փղոսկրեայ զահ՝ պատած ազնիւ ոսկւով. 5. Թագաւորի խմելու բաժակները, ամանեղէնները ոսկուց էին—արծաթը յարգի չէր. 6. Սողոմոնը նաւեր ևս շինել տուաւ: Քիրամը նրա համար լաւ նաւաստիներ ուղարկեց, որոնք իրա ծառաների հետ հեռի երկիրներ էին նաւում ոսկի, արծաթ, փղոսկր, կապիկ և սիրամարգէններ էին բերում: Այսպէս Սողոմոնը իւր հարստութիւնով և իմաստութիւնով առաջին թագաւորը դարձաւ աշխարհիս մէջ:

բ. Հարևան օտարազգի թագաւորները բազմաթիւ կիներ ունէին, ուղեց որ այդ բանում էլ առաջինը լինի, ուստի 700 օտարազգի կիներ առաւ: Ծերութեան ժամանակ նրանք Սողոմոնի սիրտը դէպի կուռքերը դարձրին՝ այնպէս որ թագաւորը նրանց համար Երուսաղէմում կռատներ ևս շինել տուաւ: Այս բանը դուր չեկաւ Աս-

տծուն. նա յայտնեց Սողոմոնին և ասաց. «Որովհետև դու իմ պատուիրանները չպահեցիր» քո թագաւորութիւնը կիսւեմ քեզնից, բայց ոչ կենդանութեանդ ժամանակ, այլ՝ քո որդու և նրանից կառնեմ ոչ ամբողջ թագաւորութիւնը, այլ նրա մի մասը քո հայր Դաւիթի սիրոյ համար՝ կթողնեմ»: Այդքան ծախսերը հոգալու համար ժողովրդի վրայ ծանր հարկեր նշանակեց՝ այն աստիճան, որ այլ ևս հնար չկար վճարելու, այս պատճառով էլ ապստամբուեցին թագաւորից Եւրղովամի առաջնորդութեամբ:

Սողոմոնը հրամայեց, որ սպանեն ապստամբին, բայց նա Եզրպտոս փախաւ: Սողոմոնը 40 տարի թագաւորելուց ետոյ՝ մեռաւ ու թաղուեց Դաւիթի քաղաքում: Նրա որդի Ռոքովամը թագաւորեց հօր տեղը:

Ե. ԹԸԳԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԿՅՈՒՄՆ ՈՒ ՎԵՐՋԸ


16. ՅԵՐՈՒՅՈՎԱՄ ԵՒ ՌՈՒՅՈՎԱՄ

ա. Ռոքովամը գնաց Սիւքէմ: Ամբողջ խորանջէն այնտեղ էր հաւաքուել—կամենում էին նրան թագաւոր օծել: Ոմանք էլ մարդ էին ուղարկել Յերոքովամին կանչելու: Նա եկաւ և ժողովրդի հետ ասացին Ռոքովամին. «Քո հայրը

մեր լուծը շատ ծանրացրեց. մենք այն պայմանով քեզ կլսենք, եթէ մեր լուծը թեթևացնես»։ Ռոբովամը հարցրեց ծերերին և ասաց. «Ի՞նչ խորհուրդ էք տալիս»։ Նրանք պատասխանեցին. «Եթէ ժողովրդին լսես, քեզ հաւատարմութեամբ կծառայես»։ Ռոբովամը մերժեց ծերերի խորհուրդը և իւր հասակակից ընկերների հետ ժողով կազմեց։ Նրանք այսպէս խորհուրդ տուին. «Դու ժողովրդին այսպէս պատասխանիր—իմ հայրը ձեզ խարազանով էր պատժում, իսկ ես՝ մարակով և կարիճով պէտք է ձեծեմ»։

Երիտասարդ ընկերների տուած խորհուրդը յայանեց Յերոբովամին։ Երբ ժողովուրդը նկատեց, որ թագաւորն իրան չի ուզում լսել, ասաց. «Ի՞նչ գործ ունենք Դաւթի տան հետ. մենք Յերոբովամին թագաւոր կօծենք»։ Այսպէս ժողովուրդը ըստանունց Ռոբովամից։ Այլ ևս ոչ ոք չէր լսում Դաւթի տան թագաւորին՝ բացի Բենիամինի ցեղից։

բ. Յերոբովամն ամրացրեց Սիլքեմը և իրան մայրաքաղաքը դարձրեց։ Նա ասում էր. «Եթէ իմ ժողովուրդը երուսաղէմ գնայ զոհ մատուցանելու, նա Յուդայի տան թագաւորին կսիրէ և ինձնից կհեռանայ»։ Սրա համար թագաւորը երկու հատ ոսկէ հորթ շինել տուաւ ու ասաց ժողովրդին. «Բաւական է ինչքան երուսաղէմ գնացիք, ահա ձեր աստուածները»։ Հորթերից




մինը Բեթէլում, իսկ միւսը Դանում՝ նշանակեց։ Ժողովուրդը պաշտում էր կուռքերին։ Սրա համար ևս Աստուած մարգարէի բերանով ասաց նրան. «Ի՞նչ թագաւորութիւնը իսպառ կջնջեմ»։

Յուդայի տունը ևս սկսեց մոռանալ Աստուծուն և սկսեց կուռքեր պաշտել: Եգիպտոսի թագաւորը, երբ իմացաւ իսրայէլի թագաւորներէ երկպառակութիւնը, Երուսաղէմի վրայ եկաւ, Աստուծու և Ռոբովամ թագաւորի տան բոլոր հարստութիւնները տարաւ: Ռոբովամն ու Յերոբովամն իրանց ամբողջ կեանքում պարապած էին ներքին պատերազմներով:

17. Ե Ղ Ի Ա.

ա. Իսրայէլի տանից շատ թագաւորներ եղան. մենք նրանցից մինի պատմութիւնը միայն կսովորենք — դա Աքաաբն էր: Սա ամուսնացաւ Սիդոն քաղաքի կռապաշտ թագաւորի Յեզաբել աղջկայ հետ և նրանց Բաճաղ կուռքին երկրպագութիւն էր տալիս: Յեզաբելը խեղդել տուաւ բոլոր մարգարէներին, միայն Եղիան կենդանի մնաց: Սա եկաւ Աքաաբի մօտ և ասաց. «Այս տարի ոչ անձրև, ոչ ցօղ կիջնի երկնքից, որովհետև քո կինը նրա մարգարէներին կոտորել տուաւ»:

բ. Աստուած ասաց Եղիային. «Դու գնա և ընակուի՛ր Զոռաթ հեղեղատի մօտ — ջուրն այնտեղից կխմես, իսկ կերակուրդ ագռաւները կընրեն»: Նա լսեց և իրոշ խօսքին և գնաց: Մի քա-



նի օրից ետոյ հեղեղատի ջուրը ցամաքեց, որովհետև անձրև չէր գալիս: Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «Վեր կնց և գնա այստեղից սիւղոնացւոյ Սարնապա քաղաքը. այնտեղ մի որ-

բեկայրի կնոջ պատուիրել եմ, որ քեզ կերակրէ»։
Եղիան երբ քաղաքի դրանը հասաւ, տեսաւ մի
որբեկայրի կին փայտ էր հաւաքում ու նրանից
հաց և ջուր խնդրեց։ Կինը պատասխանեց. «Աստ-
ծու անունը վկայ լինի, որ մի բուն ալիւրից
և մի քիչ իւղից աւելի ոչինչ չունիմ»։ Եղիան
ասաց նրան. «Գնա՛, մի վախենայ, պատրաստիր
քեզ համար էլ, ինձ համար էլ, որովհետեւ քո
տաշտից ալիւրը և ամանից իւղը չպիտի պակա-
սի մինչև որ Աստուած անձրև կուղարկէ»։ Կինը
գնաց և այնպէս էլ արաւ։ Տիրոջ ասածի հա-
մաձայ՝ տաշտից ալիւրը և ամանից իւղը երբէք
չպակասեց։

գ. Սովի երրորդ տարին Աստուած ասաց Ե-
ղիային. «Գնա՛ Աքաաբի մօտ և ասա՛, որ անձրև
պիտի թափեմ»։ Եղիան գնաց։ Երբ Աքաաբը Ե-
ղիային տեսաւ, հարցրեց. «Այդ դժեւ ես խորա-
յելի խանգարիչ»։ Եղիան պատասխանեց. «Ես
չեմ խորայելի խանգարիչը, այլ դժեւ և քո տունը
— դուք Աստծու պատուիրանները մոռացել էք և
Բահաղին էք լսում։ Մարդ ուղարկիր և հաւաքել
տո՛ւր Կարմնշու լեռան վրայ ժողովրդին և Բա-
հաղի չորս հարիւր յիսուն քուրմերին»։ Այդպէս
էլ արաւ Աքաաբը։ Եղիան դուրս եկաւ ժողո-
վրդի առաջ և ասաց. «Մինչև երբ մոլորուէք, ե-
թէ Աստուածը Եհովան է, նրան հետևեցէք», իսկ
եթէ Բահաղն է՝ նրան լսեցէք»։ Եհովայի մար-

գարէներէց միայն ես եմ կենդանի մնացել, իսկ
Բահաղին չորս հարիւր յիսուն են։ Թող մեզ եր-
կու եզր տան. մէկը սրանք վերցնեն, կոտորեն,
գնեն փայտերի վրայ՝ առանց կրակի, իսկ միւսն
էլ ես կվերցնեմ և նոյնպէս կվարուեմ։ Ետոյ
դուք Բահաղի անունը տուէք, իսկ ես՝ Եհովա-
յինը։ Այն Աստուածը, որ կրակով զոհը կայրէ,
անա՛ նա է ճշմարիտը։ Բոլոր ժողովուրդը պա-
տասխանեց. «Եատ իրաւացի խօսք է»։

Բահաղի քուրմերը վեր առան մի եզր, կո-
տորեցին ու սկսեցին Բահաղի անունը տալ և
ասել. «Ո՛վ Բահաղ, պատասխան տո՛ւր»։ Բայց
ոչ մի պատասխան չկար։ Եղիան ասում էր.
«Բարձր ձայնով կանչեցէք, գուցէ նա զբաղուած
է, շատ կարելի է քնած է»։ Նրանք սկսեցին ևս
աւելի բարձրաձայն աղաղակել, բայց դարձեալ
ոչ մի պատասխան չստացան։ Եղիան ասաց ժո-
ղովրդին. «Այժմ եկէք ինձ մօտ»։ Նա սեղան շի-
նեց. շուրջը փորեց. սեղանի վրայ փայտեր դար-
սեց. եզր կտրատեց և դարսեց փայտերի վրայ։
Երբ անգամ ողջակիզի փայտի վրայ ջուր ածել
տուաւ, այնպէս որ փոսը ծովի պէս ջրով լցուեց։
Այս բանից ետոյ Եղիան աղօթեց և ասաց. «Ո՛վ
Աբրահամի, Իսահակի և Յակովբի Աստուած,
ցոյց տուր այսօր, որ դժեւ ես ճշմարիտ Աս-
տուածը, իսկ ես՝ քո ծառան»։ Իսկոյն երկնքից
կրակ ընկաւ և այրեց ողջակէզը։ Բոլոր ժողո-



վուրդը երեսի վրայ ընկաւ և ասաց. «Յհովան է ճշմարիտ Աստուածը»: Նղիան բոլոր քուրմերին Կիսոն հեղեղատի մօտ սպանել տուաւ: Նոոյ ասաց Աքաաբին. «Լծիր կառքդ և վայր իջիր, որ անձրևը քեզ չթրջէ»: Իսկոյն քամի վիչեց. եր-

կինքը ծածկուեց սև ամպերով և սաստիկ անձրև եկաւ:

դ. Աքաաբը պատմեց Յեզարէլին այս ամենը: Յեզարէլը դեսպան ուղարկեց Նղիայի մօտ և պատուիրեց ասել. «Թող աստուածներն ինձ պատժեն, եթէ քեզ էլ քուրմերի նման սպանել չտամ»: Նղիան փախաւ Յուդայի անապատը, նստեց մի ծառի տակ և գանգատուեց: Նա պառկեց աշնտեղ և քնեց: Նոոյ վեր կացաւ. քառասուն օր ճանապարհ գնաց մինչև Գորէբ և աշնտեղ մի այրի մէջ ապրում էր: Աստուած ասաց նրան. «Ի՞նչ ես անում այստեղ, Նղիա»: Նա պատասխանեց. «Իսրայէլի որդիները կործանեցին քո անունով շինած սեղանները. քո մարգարէներին սրով կոտորեցին. ես միայն աղատուեցայ. հիմա էլ իմ կեանքի ետևիցն են ընկել»: Աստուած հասկացրեց մարգարէին իւր սխալը — որ մարդասպանութիւնը հաճելի չէ իրան: Նա ասաց. «Գարձիր և Յէուին իսրայէլի վրայ թագաւոր օծիր, իսկ Նղիսէին՝ քո փոխարէն մարգարէ: Իսրայէլի մէջ դեռ եօթը հազար հոգի ունիմ, որոնք Բահաղին չեն պաշտում, մի յուսահատուիր»:

Նղիան գնաց և Նղիսէին գտաւ վար անելիս: Մարգարէն իւր վերարկուն նրա վրայ ձգեց: Նղիսէն թողեց եղները. գնաց Նղիայի մօտ և աշակերտ դարձաւ նրան:

18. ԵՂԻԱՅԻ ՄԱՀԸ

Եղիան զգաց իւր մահուան օրը—նա ասաց Եղիսէին. «Դու այստեղ մնա, Աստուած ինձ Յորդանան է ուղարկում»: Եղիսէն ասաց. «Վկայ լինի կենդանի Աստուածը, որ քեզնից չեմ բա-



ժանուի»: Երկուսն էլ գնացին Յորդանան: Եղիան ասաց Եղիսէին. «Մահուանիցս առաջ խընդրիր, ինչ որ կամենում ես»: Եղիսէն պատաս-

խանեց. «Թող քո հոգին կրկնապատիկ իջնի իմ վրայ»: Այն ժամանակ երկնքից հրեղէն կառք իջաւ՝ հրեղէն ձիեր լծած: Եղիան մէջը նստաւ և մրրիկը նրան երկինք բարձրացրեց: Եղիսէն նայում էր նրա ետևից և աղաղակում. «Հայր, հայր, իսրայէլի կառք, ձիեր...»: Նրան այլ ևս չտեսան:

19. ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԿԱՅԻ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

ա. Իսրայէլացիները յաճախ մոռանում էին Աստծուն և հեթանոս կեանք էին վարում: Բոլոր քաղաքներում կռատներ էին շինել և Բահաղին երկրպագութիւն էին տալիս: Աստուած մարգարէի բերանով յայանեց նրանց և ասաց. «Թողէք ձեր չարութիւնները և հետեցէք իմ պատուիրաններին»: Նրանք ուշք չդարձրին Աստծու խօսքերին, դրա համար էլ Աստուած պատժեց նրանց:

Իսրայէլի վերջին թագաւորն եղաւ Ուսէն: Սա Աստծու ճանապարհով չգնաց: Ասորեստանի Սաղմանասար թագաւորը սրա դէմ պատերազմի դուրս եկաւ: Ուսէն յաղթուեց և հպատակ դարձաւ: Բայց որովհետեւ նա Եգիպտոսի թագաւորի հետ դաշն էր կապել և տարեկան հարկը կանո-

նաւոր կերպով չէր ուղարկում Ասորեստան, ուստի Սաղմանասարը Իսրայէլի թագաւորութեան վրայ եկաւ, մայրաքաղաք Սամարիան առաւ և իսրայէլացիներին դերի տարաւ Ասորեստան: Նա իւր երկրից բազմաթիւ հեթանոսներ բերել տուաւ և Սամարիայի քաղաքներում բնակեցրեց: Երկրի մէջ իսրայէլացիներ ևս մնացել էին, որոնք Տիրոջը հաւատում էին: Հեթանոսները խառնուեցան այս մնացորդ իսրայէլացիներին հետ և սրանցից յառաջացաւ սամարացի կոչուած ժողովուրդը, որը թէև աղօթում էր Տիրոջը, բայց միևնոյն ժամանակ կուռք էին պաշտում:

բ. Երբ Սաղմանասարը Իսրայէլի թագաւորութիւնը կործանեց, Յուդայի երկրում թագաւորում էր Նզելկիան: Սա կործանեց կռքերի սեղանները և պատուիրեց Աստծուն հաւատալ: Գեսպաններ ուղարկեց Իսրայէլի և Յուդայի երկրները և հրաւիրում էր ամենին Երուսաղէմ՝ Պասէքը միասին կատարելու: Մեծ բազմութիւն հաւաքուեց Երուսաղէմում: Իսրայէլի թագաւորութիւնից ևս մարդիկ էին եկել: Այստեղ ժողովուրդն ինքը կործանեց Բաշաղի սեղանը:

Ասորեստանի նոր թագաւոր Սննքերիմը Յուդայի թագաւորութեան վրայ եկաւ, վերցրեց շատ քաղաքներ և պաշարեց Երուսաղէմը: Դադաքացիներին առաց. «Ասորեստանի մեծ թագաւորի խօսքին լսեցէք. Նզելկիային մի լսէք. ե-

թէ նրա Աստուածը հզօր լինէր, երկիրն ինչու չազատեց»: Երբ Նզելկիան այս բանը լսեց, պատուեց հանդերձները, գնաց Տիրոջ տունը և մարդ ուղարկեց Նսայիւս մարգարէի մօտ ասելու. «Հեթանոսների թագաւորը նախատում է կենդանի Աստծուն, աղօթիր մեզ համար»: Նսայիան պատասխան ուղարկեց՝ ասելով. «Մի վախենաք. նա քաղաք չի մտնի, այլ կդառնայ այն ճանապարհով, որով եկել է»: Սենեքերիմը յաղթուած ետ դարձաւ Նինուէ մայրաքաղաքը:

Սրանից ետոյ Յուդայի ամենից շատ վատ թագաւորներ եղան: Յուլակիմը, որ Յուդայի թագաւորներից մինն էր, նմանապէս չար ճանապարհներով գնաց: Սրա ժամանակ Բաբելոնի Նաբոլզոդոնոսոր թագաւորը պաշարեց Երուսաղէմը: Թագաւորն անձնատուր եղաւ: Նաբոլզոդոնոսորը վեր առաւ տաճարի և պալատի գանձերը, բոլոր իշխաններին, հիւաներին և դարբիններին գերի տարաւ Բաբելոն: Նմանապէս թագաւորին իւր ընտանիքով: Սնդեկիային թագաւոր նշանակեց Յովակիմի տեղ:

Սա ևս Աստծու ճանապարհով չգնաց և ապստամբուեց Նաբոլզոդոնոսորի դէմ: Բաբելոնի թագաւորը երկրորդ անգամ եկաւ Երուսաղէմի վրայ և պաշարեց մէկ և կէս տարի: Սովը սաստկացաւ քաքաքում: Սեդեկիան գիշերով փախաւ քաղաքից, բայց թշնամիները բռնեցին և թագա-

ւորի մօտ տարան, որ դատէ: Սեգեկիայի որդի-
ներին իւր աչքի առաջ մորթեցին. իրան էլ կու-



րացրին. շղթաներով կապեցին ու գերի տարան
Բաբելոն:

Միևնոյն գիշերը թշնամիները մտան երու-
սաղէմ. կոտորեցին բնակիչներին. կողոպտեցին
բոլորին. այրեցին Տիրոջ տաճարը. թագաւորի
պալատը և քաղաքի պարիսպներն էլ կործանե-
ցին, գետնին հաւասարեցրին: Մնացած ժողո-
վուրդը և գանձերը Նաբուգոդոնոսորը Բաբելոն
գերի տարաւ: Այսպէս Յուդայի տունն էլ կոր-
ծանուեց:

20. ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՆՃԱՆԸ

ա. Նաբուգոդոնոսոր թագաւորը հրամայեց
խաբայէլացիներից գեղեցիկ և ընդունակ երեխա-
ներ ընտրեն, որ թագաւորին ծառայեն: Սրանց
մէջն էր Դանիէլը իւր երեք ընկերներով: Թա-
գաւորը հրամայեց իւր սեղանից կերակրել նը-
րանց: Բայց Դանիէլը իւր ընկերներով մերժե-
ցին այդ պատիւը և խնդրեցին ներքինապետին՝
թոյլ տալու իրենց միայն կանաչեղենով կերակ-
րուել և ջուր խմել: Ներքինապետը տասն օր
ժամանակ սուսաւ նրանց և նկատեց, որ աւելի
գեղեցկացան: Աստուած խաբայէլի մանուկներին
իմաստութիւն, իսկ Դանիէլին երազ մեկնելու
շնորհ տուաւ: Թագաւորը Դանիէլին և նրա ե-
րեք ընկերներին մեծ պաշտօններ յանձնեց:


բ. Նաբուգոդոնոսորը մի ոսկէ արձան շինեւ տուաւ, կանչեց ժողովրդին ու ասաց. «Երբ փողի ձայնը լսէք, ոսկէ արձանին երկրպագութիւն տուէք, իսկ ով չի հնազանդի, հնոցը կձգուի»։ Փողը փչելուն պէս՝ ամենքն էլ ոսկէ արձանին երկրպագութիւն տուին՝ բացի Դանիէլից և իւր երեք ընկերներէից։ Այս լուրը թագաւորին հասցրին։ Նաբուգոդոնոսորը բարկացաւ, կանչեւ տուաւ երեքին էլ և ասաց. «Եթէ արձանին երկրպագութիւն չտաք, կրակը կձգեմ ձեզ»։ Նրանք մերժեցին։

Նաբուգոդոնոսորը բարկացաւ. կապել տուաւ երեքին էլ և շորերով կրակը ձգեց։ Թագաւորը նայեց, զարհուրեց, հարցրեց իւր հորհրդականին և ասաց. «Ձէ՞ որ մենք երեք մարդ ձգեցինք կրակի մէջ, ես չորսն եմ տեսնում—նրանք ազատ ման են գալիս և անվնաս են»։ Թագաւորը կրակին մօտեցաւ և ասաց. «Ո՛վ դուք Աստուծո՞ւ ծառաներ, դուքս եկէք»։ Նրանք դուքս եկան։ Կրակը նրանց մի մագն էլ չէր այրել։ Նաբուգոդոնոսորն ասաց. «Օրհնեալ է սրանց ազատող Աստուածը, ով այս մարդկանց Աստծուն անպատուէ, կտոր կտոր կլինի»։ Թագաւորը երեքին էլ մեծ իշխանութիւն տուաւ։

գ. Մի անգամ Նաբուգոդոնոսորը երազ տեսաւ։ Երբ զարթեց, խիստ վախեցաւ։ Կանչեւ

տուաւ բոլոր մոգերին, որ երազը մեկնեն։ Նրանք ասացին թագաւորին. «Պատմիր մեզ քո երազը»։ Իսկ թագաւորը պատասխանեց. «Երազը մոռացել եմ, եթէ դուք չէք գտնի և չէք մեկնի, մահու պատիժ կստանաք»։ Նրանք պատասխանեցին. «Երկրիս վրայ մարդ չկայ, որ թագաւորի պահանջածն իմանայ»։ Թագաւորը բարկացաւ և հրամայեց Բաբելոնի իմաստուններին կոտորել։ Երբ Դանիէլն այս բանն իմացաւ, խնդրեց իրեն ժամանակ տալ. տուն գնաց և իւր ընկերների հետ աղօթում էր։ Գաղտնիքը երազում յայտնուեց Դանիէլին։ Նա գնաց թագաւորի մօտ և ասաց. «Այն՝ ինչ որ թագաւորը պահանջում է, միայն երկնքի Աստուածը գիտէ և նա յայտնում է, թէ ինչ պիտի պատահի։ Ո՛վ թագաւոր, դու երազում տեսել ես մի մեծ արձան, որի գլուխը ոսկուց էր, կուրծքը և բազուկները՝ արծաթից, մէջքը՝ պղնձից, սրունքները՝ երկաթից, ոտների մէկ մասը երկաթից, իսկ միւսը՝ կաւից։ Մի քար պոկուեց՝ զիպաւ արձանի ստներին և կոտորտեց։ Այն ժամանակ փշրուեցան երկաթը, կաւը, պղինձը, արծաթը, ոսկին և անյայտացան, իսկ գլորուող քարը մեծացաւ լեռան չափ և լցրեց երկիրը։ Սա երազն է, այժմ մեկնութիւնը—դու թագաւորների թագաւորն ես. դու ես այն ոսկէ գլուխը. քեզնից ետոյ ուրիշ թագաւորութիւն կգայ, միայն տկար կլինի։ Ետոյ երրորդ

Թագաւորութիւն կգայ, սա էլ պղնձից կլինի: Չորրորդը երկաթի նման ամեն բան կջարդէ: Այդ ժամանակներումն Աստուած երկնքիցը մէկ նոր Թագաւորութիւն կուղարկէ և սա կիշրէ եղած բոլոր Թագաւորութիւնները — այն Թագաւորութիւնը յաւիտեան կտեւէ»: Նաբուգոդոնոսոր-



ըը երեսի վրայ ընկաւ և ասաց. «Ձեր Աստուածը ամենից մեծն է»: Թագաւորը Դանիէլին շատ պարգևներ տուաւ և իշխան նշանակեց Բաբելոնի գաւառի վրայ:

դ. Երբ Բաղդասարը իշխում էր Բաբելոնի վրայ, Պարսից Կիւրոս Թագաւորը պաշարեց քաղաքը: Այդ միջոցին Բաղդասարը խնճոյք ունէր: Ճաշի ժամանակ հրամայեց, որ Նաբուգոդոնոսորի ձե-

ռով Երուսաղէմից բերուած սրբազան անօթնե-րով ուրախանան: Բերին, խմում և շնորհակալութիւն էին անում Հաստուածներին: Նոյն ժամին երեւցան մարդու մատներ, որոնք զրում էին դանիճի պատի վրայ: Երբ Թագաւորը ձեռը նկատեց, գոյնը փոխուեց: Թագաւորը մոգերին իւր մօտ կանչեց: Սրանք եկան, բայց և ոչ մինը կարողացաւ կարգաւ և մեկնել: Այս բանից Թագաւորն աւելի վախեցաւ: Թագունին պատմեց իմաստուն Դանիէլի մասին: Իսկոյն կանչեցին: Դանիէլն ասաց. «Գրուածքը և նրա միտքն այս է — մանէ, թնկեղ, փարէս» այսինքն, Հափեցի, կշռեցի և բաժանեցի: Քո Թագաւորութեան օրերը Հափած են. քեզ կշռեցին և թեթեւ գտան. քո Թագաւորութիւնը կբաժանուի և պարսիկներին կտրուի»:

Այդ միևնույն գիշերում Բաղդասար Թագաւորը սպանուեց: Պարսից Կիւրոսն առաւ քաղաքը և տիրեց Բաբելոնոստանին:

ե. Կիւրոսը իւր Թագաւորութեան առաջին տարիներում հրաման հանեց ասելով. «Երկնքի Աստուած Եհովան հրամայեց, որ Երուսաղէմում իրա համար մի տուն շինեմ: Ով իրան նրա ժողովուրդն է համարում, թող Երուսաղէմ գնայ և Աստծու տունը նորից շինէ: Հայրենիք դարձողների թիւը 42,000-ից աւելի էր: Զօրաքաջէլը Յեսուն և քահանայապետները առաջնոր-

դում էին նրանց: Յնտուն և քահանայապետը Երուսաղէմ հասնելուն պէս զոհ մատուցին Աստծուն: Երկրորդ տարին սկսեցին տաճարը նորոգել:

Երբ Սամարացիները իմացան, որ գերութիւնից դարձած հրէաներն սկսել են Աստծու համար տուն շինել, եկան Զորաբաբէլի մօտ ու աւացին. «Մենք ևս կամենում ենք Աստծու տան շինութեան մասնակից լինել»: Իսկ նրանք պատասխանեցին. «Ո՛հ, մենք միայնակ պիտի շինենք»: Այդ օրից սկսած՝ սամարացիներն աշխատում էին խանդարել շինութիւնը: Բայց Աստուած իսրայէլացւոյ հետն էր: Նրանք աւարտեցին տաճարը և մեծ հանդէսով օծեցին:

Մի քանի տարի անց՝ երկրորդ խումբը եկաւ Եզրասի առաջնորդութեամբ: Նա վերականգնեց աստուածապաշտութեան կարգերը՝ Մովսէսի կանոններին համաձայն և հաւաքեց այն զրուածքները, որոնք Մովսէսից սկսած յայտնի էին: Ժողովրդից ոմանք հեթանոս կանայք ունէին: Եզրասն Աստծու անունով պատուիրեց նրանց, որ բաժանուեն իրանց կանանցից և բաժանուեցին:


Պարսից թագաւորի գաւառապետ Նէեմի՛ն լսեց, որ Երուսաղէմի պարիսպները դեռ ևս կործանուած են—գնաց թագաւորի մօտ և ասաց. «Արձակիր ծառայիդ, որ գնամ և իմ հայրենիք

քաղաքը շինեմ»: Թագաւորը թոյլ տուաւ: Նէեմին վերադարձաւ հայրենիք և սկսեց քաղաքի պարիսպները և դռները շինել: Երբ այս բանը սամարացիներն իմացան, սկսեցին պատերազմել հրէաների դէմ: Հրէաների կէսը զէնքը ձեռին պատերազմում էր, իսկ միւս կէսը պարիսպներն էր կառուցանում: Այս ձևով վերջացրին քաղաքի պարիսպները: Սրանից ետոյ Նէեմին ժողովրդին Ֆուգայի քաղաքներից Երուսաղէմ հաւաքեց: Եզրասը դուրս բերաւ Մովսէսի օրինաց գիրքը. կանգնեց ժողովրդի առաջ և կարդում էր՝ առաւօտից մինչև երեկոյ: Բոլոր ժողովուրդը արտասուում էր: Եզրասն ասաց. «Յիէք Աստծու հետ նոր դաշը կապենք»: Նրանք խոստովանեցին իրանց յանցանքը և երդուեցին, որ Աստծու պատուերաններից այլ ևս չեն անցնի:

21. ՀԱՄԱՌՕՏԱԴՈՅՆ ՀԱՅԵԱՅՔ ՅՔՐԻՍՏՈՍ

Գերութիւնից վերադարձած հրէաները մնացին պարսից իշխանութեան ներքոյ՝ մինչև այդ տէրութեան անկումը:

Պարսիկներից ետոյ Քանանը նուաճեցին զահագան ազգեր—նախ՝ Մակեդոնացիները Ալէքսանդր մեծի օրօք. ետոյ Նզիպտոսի պաղովնոսները: Սրանից ետոյ՝ Մաղաթիա քահանայապե-



տի և սրա քաջ որդւոց օրով, որոնք Մակաբայեցի հրէայ իշխանական տոհմից էին, Քանանը փոքր ինչ ազատութիւն վայելեց, բայց այդ ազատութիւնը կարճ տևեց, որովհետև երկպառա-

կութիւն ընկաւ մակաբայեցւոց տան մէջ, որի պատճառով հռովմայեցի քաջ զօրապետ Պոմպէյոսին դատաւոր հրաւիրեցին՝ ներքին խռովութեանը վերջ տալու համար:

Պոմպէյոսը օգտուեց հանգամանքից և Քանանը ենթարկեց հռովմայեցւոց իշխանութեան: Սրանց նշանակած կառավարիչներից մէկն էլ Հերովդէս Մեծն էր, որը կոտորել տուաւ մակաբայեցւոց տան բոլոր ժառանգներին: Բայց միւս կողմից՝ հրէաների սիրտը շահելու համար 20 թ. Քրիստոսից առաջ շինել տուաւ Երուսաղէմի հոյակապ տաճարը:

Այս Հերովդէսի ժամանակ ծնաւ Յիսուս Քրիստոսը:

Բ.

Ն Ո Ր - Ո Ւ Խ Տ

22. ՓԱՐԻՍԵՅԻՆ ԵՒ ՄԱՔՍԱԻՈՐԸ

Այն մարդիկը, որոնք իրանք են իրանց արժանաւորութիւնը չափում, բարեպաշտ համարում, իսկ ուրիշներին արհամարհում, վատաբանում, այդպիսիների համար Յիսուս այս առակը պատմեց.

«Երկու մարդ տաճար գնացին աղօթք անե-



ու: Նրանցից մինը փարիսեցի էր, իսկ միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին առանձին կանգնած սըրբութեան առաջ՝ այսպէս էր աղօթում— շնորհակալ եմ քեզնից, Աստուած, որ ես ուրիշ մարդկանց նման յափշտակող, անիրաւ կամ շնացող չեմ, ինչպէս այս մաքսաւորն է. շաբաթը երկու անգամ ծով եմ պահում և իմ բոլոր ստացուածներից տասանորդ եմ տալիս»:

Իսկ մաքսաւորը գաւթի հեռաւոր անկիւնում կանգնած, գլուխը քաշ ձգած իրան մեղաւոր էր համարում, կուրծքը ծեծում էր և ասում. «Աստուած, քաւիր մեղաւորիս»:

Յիսուս գնահատեց երկուսի աղօթքն էլ ու ասաց— մաքսաւորն իրան խոնարհեցրեց, ուստի և արդարացած վերադարձաւ տուն: Ուրեմն ով իրան կբարձրացնէ փարիսեցու նման, կխոնարհի, իսկ ով կխոնարհեցնէ մաքսաւորի նման, կբարձրանայ»:

23. ՉԱՐ ԾԱՌԱՅԻ ԱՌԱԿԸ

Յիսուս ասաց հետեւեալ առակը: «Մի թագաւոր կամենում էր իւր պարտապանների հետ հաշիւ տեսնել: Երբ հաշիւն սկսաւ, նրան ներկայացաւ բիւր (10,000) քանքարի մի պարտապան: Բայց որովհետեւ նա չկարողացաւ վճա-

բել, ուստի տէրը հրամայեց նրա կինն ու որդիները և բոլոր ունեցածը ծախել: Պարտապանը տիրոջ ոտներն ընկաւ. երկրպագութիւն էր տալիս և ասում. «Համբերիր, տէր, բոլորը կվճարեմ— ժամանակ տուր, պարտքս չեմ ուրանում»: Տէրը հաւանեց ծառայի վարմունքը, խղճաց նրան և ոչ միայն ժամանակ տուաւ, այլև ամբողջ պարտքը ներեց:

Այդ միևնույն մարդը պատահեց իւր ընկեր ծառաներից մինին, որ իրան հարիւր դահեկան (60 ոբ.) էր պարտ: Բռնեց նրան, խեղդում էր և ասում. «Վճարիր պարտքդ»: Ծառայակիցը նրա ոտքերն ընկաւ, աղաչում էր և ասում. «Համբերիր, բոլորը կհատուցանեմ, խնդրում եմ ժամանակ տնւր»: Բայց նա չհամաձայնեց, այլ գնաց և բանտարկել տուաւ մինչև պարքը վճարէ:

Ընկեր ծառաները, երբ այս բանը տեսան, շատ բարկացան, եկան և իրանց տիրոջը յայտնեցին: Այն ժամանակ տէրը նրան իւր մօտ կանչեց և ասաց. «Չար ծառայ, ես քո բոլոր պարտքը ներեցի, որովհետև դու ինձ խնդրեցիր ժամանակ տալ. միթէ դու էլ քո ընկերի հետ այդպէս չպիտի վարուէիր»: Տէրը բարկացաւ և ծառային մատնեց դահլճներին՝ մինչև որ պարտքն ամբողջապէս վճարէ: Յետոյ ասաց Յիսուս. «Իմ երկնաւոր Հայրն էլ ձեզ հետ այդպէս կվարուէ»:

Եթէ դուք նոյնպէս ներողամիտ չէք լինի դէպի ձեր ընկերները»:

Այն ժամանակ մօտ եկաւ Սիմօն Պետրոսն և ասաց. «Տէր, քանի՞ անգամ ներեմ ընկերին, եթէ նա իմ դէմ մեղանչէ՝ եօթն անգամ բաւական չէ»: Յիսուս պատասխանեց և ասաց. «Ոչ թէ եօթը, այլ եօթանասուն անգամ եօթը»— անվերջ անգամ:

24. ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿԸ

Մի հարուստ մարդ հագնում էր թանկագին շորեր ու ամեն օր փառաւոր կեանք էր վարում: Մի աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անունով՝ հարստի դրանն ընկած: Սա վերքերով լիքն էր և կերակրւում էր հարստի սեղանից թափուած փշրանքներով: Շները գալիս և լիզում էին սրա վերքերը— սրանք մարդկանցից աւելի գթոտ էին:

Աղքատը մեռաւ: Հրեշտակները տարան նրան արքայութիւն՝ հէնց Աբրահամի գոգը: Հարուստն էլ մեռաւ, բայց սա դժոգք դնաց: Երբ վերջինս այնտեղ աչքերը բաց արաւ և հեռուից տեսաւ Ղազարոսին Աբրահամի գոգում՝ ասաց. «Հայր Աբրահամ, խղճա՛ ինձ, ուղարկիր Ղազարոսին, որ մատի ծայրը ջրով թաց անէ և իմ պապական լեզուն զովացնէ, ես այս կրակի բո-



ցերի մէջ այրւում եմ»։ Աբրահամը պատասխանեց և ասաց. «Դու քո կենդանութեան ժամանակ վայելում էիր երկրային բոլոր բարութիւն-

ները, իսկ Ղազարոսը չարչարւում էր. այժմ նա այստեղ պիտի ուրախանայ, իսկ դու տանջուես։ Բացի զբանից մեր և ձեր մէջ մեծ անդունդ կայ, այնպէս որ՝ ոչ այստեղից ձեր մօտ կարելի է անցնել և ոչ այդտեղից մեզ մօտ գալ»։

Հարուստն ասաց. «Աղաչում եմ, հայր Աբրահամ, գոնէ ուղարկիր Ղազարոսին մեր տուն. ես հինգ եղբայր ունեմ. թող գնայ, նրանց զգուշացնէ, որ նրանք էլ չգան այս տանջանքի տեղը»։ Աբրահամը պատասխանեց. «Նրանք ունին Մովսէս և մարգարէներ, թող նրանց լսեն, այստեղ չեն գայ»։ Հարուստը պատասխանեց. «Ոչ, հայր Աբրահամ, եթէ մեռելներից մինը գնայ, նրան աւելի կլսեն»։ Աբրահամը կրկնեց. «Երբ Մովսէսին և մարգարէներին չեն լսում, եթէ մեռելներից մինն էլ յարութիւն առնէ և նրանց մօտ գնայ, դարձեալ չեն հաւատայ»։

25. ԱՅԳՈՒ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Մի հարուստ մարդ առաւօտը վաղ դուրս եկաւ իւր այգու համար մշակներ վարձելու։ Մշակների հետ օրը մի դահեկանի (60 կոպէկ) խօսելով՝ ուղարկեց իւր այգին։ Ժամը երեքի (մեր ժամի 9-ն) մօտ դուրս եկաւ, տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում անգործ

կանգնել էին և ասաց նրանց. «Դուք էլ գնացէ՛ք իմ այգին և ինչ որ արժան է, կստանաք»։ Նրանք էլ գնացին։ Դարձեալ հրապարակ դուրս եկաւ ժամը վեցին (12), իննին (3) և նոյնպէս արաւ։ Ժամը տասնեմէկին (5) մօտ դուրս եկաւ, ուրիշ պարապ մշակներ գտաւ և ասաց նրանց. «Ամբողջ օրն ինչո՞ւ էք այստեղ պարապ կանգնել»։ Մշակներն ասացին. «Որովհետեւ մեզ ոչ ոք չվարձեց»։ Այն ժամանակ տանուտէրն ասաց. «Դուք էլ գնացէ՛ք իմ այգին և ինչ որ արժան է, կստանաք»։

Նրեկոյեան՝ այգու տէրը վերակացուին ասաց. «Կանչիր մշակներին և տուր նրանց վարձը՝ ամենաուշ եկողներից սկսած՝ մինչև առաւօտը վաղ եկողները։ Ժամը տասնեմէկին եկողները մօտեցան և մի-մի դահեկան ստացան։ Ամենից վաղ եկող մշակները կարծում էին, թէ աւելի կստանան, բայց նրանք էլ մի-մի դահեկան ստացան։ Սրանք տանտիրոջից տրանջացին և ասացին։ «Մենք օրուայ շոք ժամանակն ենք աշխատել, իսկ դրանք հով. մենք երկար ժամանակ ենք աշխատել, իսկ դրանք՝ մի ժամ միայն— միթէ կարելի է բոլորիս էլ հաւասար վարձատրել»։ Նա էլ նրանցից մինին պատասխանեց և ասաց. «Ընկեր, ես քեզ չեմ գրկում, չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանով համաձայնեցար. քո վարձն սո՞ւ և զնա՞. ես կամենում եմ, որ այն

ուշ եկողին էլ քեզ չափ տամ. միթէ ես իշխանութիւն չունեմ իմ փողի հետ այնպէս վարուելու՝ ինչպէս իմ ցանկութիւնն է—ինչո՞ւ ես նախանձում, որ ես առատաձեռն եմ»։

Այսպէս ետինները կլինին առաջին, իսկ առաջինները՝ ետին։

26. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՅՈՒ ԱՌԱԿԸ

Յիսուս այս առակը պատմեց մի օրինականի։ Մի մարդ Նրուսաղէմից գնում էր Նրիբով քաղաքը։ Ճանապարհին աւազակների ձեռն ընկաւ։ Սրանք կողոպտեցին անծանօթին. վիրաւորեցին. կիսամահ թողին և գնացին։

Պատահմամբ մի քահանայ այդ ճանապարհովն անցաւ. տեսաւ նրան, բայց թողեց գնաց՝ առանց ուշադրութիւն դարձնելու։ Նոյն նոյն տեղովն անցաւ մի ղևտացի (տիրացու)։ Նա ևս տեսաւ և անցաւ, գնաց։ Նկաւ մի սամարացի ճանապարհորդ։ Բայց սա, երբ տեսաւ նրան, խղճաց. իջաւ գրաստից. վերքերը փաթաթեց. վրան ձէթ դրաւ. գինի խմացրեց. գրաստի վրայ դրաւ և մօտիկ իջևանը հասցրեց։ Հետեւեալ օրը՝ երբ պէտք է հեռանար, իջևանի տիրոջը երկու դահեկան տուաւ և ասաց. «Խնամք տար սրան, եթէ աւելի ծախս անես, վերադարձիս կվճարեմ։

Սրանից ետոյ Յիսուս հարցրեց օրինակա-
նին. «Ասա ինձ, այն երեքից որն է ընկեր եղել
աւագակների ձեռն ընկած մարդուն»։ Օրինականն



ասաց. «Նա՛ որ ողորմութիւն արաւ՝ խղճաց»։ Յի-
սուս ասաց. «Գնա՛, դու էլ այնպէս արա՛»։


27. Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Մ Կ Ի Տ Ի Չ

Աւետումն — Հրէաների Հերովդէս Թագաւորի
ժամանակ մի քահանայ էր ապրում՝ անունը զա-
քարիա։ Նրա կնոջ անունը Նղիսարէթ էր։ Եր-
կունն էլ արգար էին։ Աստծու բոլոր պատուի-
րանները ճշտութեամբ էին կատարում։ Նրանք
զաւակ չունէին և ծերացել էին։

Մի անգամ Զաքարիան իւր հերթին տաճա-
րը մտաւ խնկարկելու՝ աղօթելու համար։ Ժողո-
վուրդը դուրսն աղօթում էր։ Խնկարկելու ժա-
մանակ հրեշտակը երևաց Զաքարիային։ Վերջինս
խիստ վախեցաւ։

Հրեշտակն ասաց. «Մի վախենար, Զաքա-
րիա. Աստուած աղօթքդ լսեց. քո կին Նղիսարէ-
թը մի որդի կունենայ. նրա անունը Յովհաննէս
կզնես. նա Աստծու առաջ մեծ մարդ կլինի և
խաբայելի որդիներից շատերին դէպի ճամարիտ
Աստուածը կգարձնէ — նա կքարոզէ և նրա հա-
մար ժողովուրդը կպատրաստէ»։

Զաքարիան պատասխանեց հրեշտակին. «Այդ
ինչպէս կարելի է, ես էլ, կինս էլ ծերացած ենք»։
Հրեշտակը պատասխանեց. «Իմ անունն է Գաբ-



րիէլ, ես Աստծու ծառան եմ. նա ինձ ուղարկեց, որ քեզ աչքալոյս տամ, բայց որովհետեւ ինձ չհաւատացիր, իբրեւ պատիժ, համը կմնաս՝ մինչեւ որ իմ ասածները կկատարուի—դու մի որդի կունենաս»:

Զաքարիան պապանձուեց, իսկ ժողովուրդն սպասում էր նրան և զարմանում, որ այդքան ուշացաւ: Երբ տաճարից դուրս եկաւ, այլ ևս չէր կարողանում խօսել: Զաքարիան նշաններով

էր խօսում ժողովրդի հետ: Երբ նրա հերթը վերջացաւ, վերադարձաւ տուն:

Ծնունդ—Մի տարուց ետոյ Եղիսաբէթը որդի ունեցաւ: Երբ նրա ազգականները և զրացիներն իմացան, շատ ուրախացան:

Եւթն օրից ետոյ, հրէաների սովորութեան համաձայն, մանկանը թրպատեցին և կամենում էին Զաքարիա անուանել: Բայց մայրն արգելում էր և ասում, թէ նրա անունը Յովհաննէս պիտի լինի: Բարեկամները պատասխանեցին, որ քո ազգականների մէջ ոչ ոք այդպիսի անուն չունի: Վերջն ամենքն էլ հօրը դիմեցին, թէ նա ինչ անուն կցանկանայ դնել:

Այն ժամանակ թուղթ չկար: Զաքարիան մի տախտակ պահանջեց և նրա վրայ գրեց. «Յովհաննէս է սրա անունը»: Իսկոյն լեզուն բացուեց—խօսում և օրհնում էր Աստծուն: Ամենքն էլ զարմանում էին այս բանի վրայ և ասում. «Ի՞նչ պէտք է դառնայ այս մանուկը»:

Մանուկ Յովհաննէսը հասակով մեծանում էր և հոգևով զօրանում: Նա ապրում էր Յուզաբի անապատում:

Քարոզութիւն. Երբ Յովհաննէսը 30 տարեկան դարձաւ, Աստուած հրամայեց նրան Յորդանանի կողմերը գնալ և քարոզել: «Ապաշխա-

ընցէք, մեղքերիցդ ետ կանգնեցէք, որովհետեւ երկնքի թագաւոր Գրիստոսը գալու է շուտով»։

Յովհաննէսը շատ պարզ կեանք էր վարում — նրա շորերը ուղտի բրդից էին, գօտիկը կաշուից, իսկ կերակուրը մարախ և վայրի մեղր էր։

Յովհաննէսի մօտ էին գալիս երուսաղէմացիները, Հրէաստանի բոլոր ժողովուրդը, Յորդանանի կողմերից և խոստովանում էին իրանց մեղքերը։ Ով ապաշխարում էր և խոստանում իւր մեղքերը չկրկնել, Յովհաննէսն այգալիսիններին լողացնում՝ մկրտում էր Յորդանան գետի մէջ և ասում — ես քո մարմինը մաքրեցի ջրով, գնահ, դու էլ քո սիրտն այգալէս մաքրի՛ր։

Մահը — Հերովդէսը խլեց իւր եղբայր Փիլիպպոսի Հերովդիա կնոջը և ամուսնացաւ նրա հետ։ Յովհաննէսը, որպէս մարգարէ, նկատողութիւն առաւ Հերովդէսին և ասաց. «Վայել չէ քեզ, որ դրան կին ունենաս»։ Հերովդէսը բարկացաւ և ուզում էր նրան սպանել, բայց ժողովրդից վախենում էր, որովհետեւ նրան պաշտպանում էր, ուստի բանտարկել տուաւ Յովհաննէսին։

Թագաւորն ուզում էր Յովհաննէսին վրէժխնդիր լինել և դրա համար յարմար առիթ էր սպասում։ Այդ առիթը ներկայացաւ — թագաւորի ծննդեան օրն էր. մեծ խնջոյք տուաւ, ուր ներկայ էին նախարարները, զօրապետները և Գալի-

Աիայի բոլոր մեծամեծները։ Այդտեղ էր և Հերովդիայի աղջիկ Սաղոմէն։ Նա կաքաւեց և շատ դուր եկաւ թէ թագաւորին և թէ հիւրերին։

Թագաւորն ասաց աղջկան. «Խնդրիր, ինձ նից, ինչ որ ուզում ես և ես կտամ քեզ՝ մինչև անգամ իմ թագաւորութեան կէսը»։ Աղջիկը մօրը հարցրեց. «Ի՞նչ խնդրեմ»։ Նա էլ ասաց. «Յովհաննէս Մկրտչի գլուխը»։

Սողոմէն թագաւորի մօտ եկաւ և ասաց. «Ես կամենում եմ Յովհաննէս Մկրտչի գլուխը»։

Թագաւորը շատ տրամեց, նոր հասկացաւ իւր սխալ առաջարկութիւնը, բայց որովհետեւ երգուել էր հիւրերի առաջ, չուզեց խօսքը ետ առնել։ Իսկոյն դահիճ ուղարկեց բանտ և զխատել տուաւ Յովհաննէսին. մի սկուտղի մէջ դրաւ գլուխը և աղջկան տուաւ. նա էլ իւր մօրը տարաւ։

Երբ այս լուրը նրա աշակերտներն իմացան, եկան գիտիլ տարան, թաղեցին և յայտնեցին Յիսուսին։

Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱԿԱՏՈՅ ՀԱՆ-
ԳԱՆԱԿԸ — ԴԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ

Ա.

Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամե-

նակալ, յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից:

ը

Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս. յՈրդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ՝ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր:

Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթ:

Որ յազազս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ մարմին, հոգի և միտ և զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ 'ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնով և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թաղաւթեան ոչ գոյ վախճան:

զ.

Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարդա-

րէս և յաւետարանս: Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և 'ի միմիայն ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի. ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց. 'ի յարութիւն մեռելոց 'ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս:

29. ՀԱՒԱՏԱՄՔԻ ՀԱՄԱՌՕՏ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ա. ՀԱՅՐ ԱՍՏԾՈՒ ՄԱՍԻՆ

Հաւատում ենք—1, որ Աստուած կայ. 2, որ այդ Աստուածը մի է (և ոչ մի քանի՝ կուռքեր): Մի Աստուած դաւանելով՝ ընդունում ենք, որ նա ունի իւր մէջ երեք անձն—Երրորդութիւն (Հայր, Որդի և Սուրբ-Հոգի), որոնք իրար հաւասար են ամեն յատկութիւններով. 3, որ այդ Աստուածը ամենակալ հայր է՝ ամենի տէրն է. 4, որ նա ստեղծել է երկինքն ու երկիրը, երևելի և աներևոյթ (հրեշտակ, հոգի) արարածները:

բ. ՈՐԴԻ ԱՍՏԾՈՒ ՄԱՍԻՆ

Հաւատում ենք—5, որ Երրորդութեան երկրորդ անձն է մեր տէր Յիսուս Քրիստոսը. 6, որ նա Հայր Աստուծու Միածին—միակ որդին է.

7, որ նա Հօր Էութիւնիցն է—ինչ որ Հայրն է, նոյնը և Որդին է:

Հաւատում ենք—8, որ Յիսուս Քրիստոս Աստուած է՝ Աստծուց, լոյս է՝ լուսից, ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստծուց ծնուած (ինչպէս արեւից մի ճառագայթ). 9, որ Յիսուս Քրիստոս Հայր Աստծու բնութիւնիցն է, ունի նրա բոլոր յատկութիւնները—ստեղծող է երկնքի և երկրի, երեւիի և աներեւոյթ արարածներին:

Հաւատում ենք—10, որ Յիսուս Քրիստոս մեր՝ մարդոց փրկութեան համար երկնքից իջաւ. մարմինն առաւ, այսինքն մարդ դարձաւ. իբրեւ կատարեալ մարդ ծնաւ սուրբ կոյս Մարիամից Սուրբ Հոգւոյ շնորքով. ընդունեց մարմին, հոգի, միտք և այն ամենը՝ ինչ որ սովորական մարդն ունի՝ բացի մեղքից: Եւ այդ ամենը նա ընդունեց իսկապէս և ոչ առ աչօք—աչքին երեւալով:

Հաւատում ենք—11, որ Յիսուս Քրիստոս չարչարուեց. 12, խաչուեց. 13, թաղուեց. 14, երրորդ օրը յարութիւն առաւ. 15, միեւնոյն մարմնով երկինք համբարձաւ և 16, նստաւ Հայր Աստծու աջ կողմը:

Հաւատում ենք—17, որ Յիսուս Քրիստոս մի Ժամանակ նոյն մարմնով դալու է աշխարհ աստուածային փառքով (հրեշտակներով, ամպերի վրայ նստած) դատելու կենդանի մնացած մարդկանց և յարութիւն առածներին, որի թագաւո-

րութիւնն անվերջ կլինի և ոչ ինչպէս այս աշխարհի անցաւոր թագաւորութիւններն են:

3. ՍՈՒՐԲ ՀՈԳԻ ԱՍՏԾՈՒ ՄԱՍԻՆ

Հաւատում ենք—18, Սուրբ Հոգուն՝ որ երրորդութեան երրորդ անձն է. 19, որ նա աննդ է (ստեղծուած չէ) և կատարեալ է (ամենակալ է, արարիչ է...): 20, որ նրա ներշնչմամբ սահմանուեց Օրէնքը, քարոզեցին մարգարէները և գրուեցին աւետարանները. 21, որ նոյն Սուրբ Հոգին մկրտութեան ժամանակ իջաւ Յիսուսի վրայ Յորդանան գետում, ուր և վկայեց թէ Յիսուս Հայր Աստծու որդին է. 22, որ այդ նոյն Սուրբ Հոգին բնակուեց առաքեալներին և սուրբերին մէջ:

Հաւատում ենք 23, Քրիստոսի եկեղեցուն: Եկեղեցի նշանակում է Քրիստոսին հաւատացողների խումբ, որը հաւատում է այն ամենին՝ ինչ որ Քրիստոս քարոզել է. հոգւով միացած է նրա հետ, որին ընդունում է գլուխ՝ (վէմ) եկեղեցւոյ: 24. Այդ եկեղեցին կոչւում է մի, որովհետեւ ա. նրա գլուխը՝ մէկ է և բ. մէկ է այն հոգին, որ միաւորում է բոլոր անդամներին՝ քրիստոնեաներին միմեանց հետ: 25, Ոչ քրիստոնեաներն ևս, ինչ ազգից և դաւանութիւնից էլ լինին նրանք, հրաւիրւում են անդամ լինելու, դրա համար էլ եկեղեցին կոչւում է նաև ընդ-

հանրական: 26. Թէև քրիստոնէական եկեղեցու հիմնադիրը Քրիստոս է, բայց նրա աւետարանը առաքեալները քարոզեցին և հիմնեցին եկեղեցիներ, ուրեմն նրանց (եկեղեցիների) հետ էլ կապ պիտի պահպանեն—մենք հաւատում ենք առաքեալների հիմնած եկեղեցուն ևս: 27, Եկեղեցին կոչւում է նաև սուրբ, այսինքն ա. նրա անդամները մաքուր՝ սուրբ և սխալ վարդապետութիւնից զերծ պիտի լինին և բ. մկրտուելով ազատուել՝ սրբուել են Ադամային մեղքից - դրան ևս հաւատում ենք: 28. Մկրտուելով Սուրբ Հոգին մեզ կապում է Քրիստոսի եկեղեցու հետ, մաքրում է մեզ Ադամային մեղքից, ուստի և նրա կրկնութիւնը (կրկին անգամ մկրտուելը) սխալ է—մենք հաւատում ենք մի անգամուայ մկրտութեան: 29. Մկրտութիւնից ետոյ մենք դարձեալ կարող ենք սխալուել, մեղք գործել (ներգործական մեղք). այս մեղքից կարող ենք ազատուել, եթէ սրտանց զղջանք—ապաշխարենք. հաւատում ենք որ ապաշխարութիւնով մեր մեղքերը կարող ենք քաւել, թողութիւն ստանալ: 30, Հաւատում ենք որ մենք մի օր յարութիւն պիտի առնենք անապական մամնով և նորից շարունակենք մեր անվերջ գոյութիւնը. 31, որ հոգիների և մարմինների դատաստան պիտի լինի վերջին դատաստանի օրը. 32, որ արդարները պիտի ժառանգեն յաւիտենական կեանք, իսկ մեղաւորները մշտական, անվերջ տանջանք:

Պ.

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Յիսուսի Համբարձումից տասն օր ետոյ Սուրբ Հոգին իջաւ առաքեալների վրայ վերնատանը: Նրանք իսկոյն Սուրբ Հոգւով լցուեցան և սկսեցին քարոզել վերնատնից Յիսուս Քրիստոսի մասին և վկայել, որ նա Աստծու որդին է: Այդ օրը 3,000 հոգի հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան: Այսպէս կազմուեց մի խումբ հաւատացեալների, որոնք հոգւով միացած էին Յիսուսի հետ—այդ հաւատացեալների խումբը կոչւում է եկեղեցի: Առաքեալները բացի քարոզելուց՝ հոգում էին նաև հաւատացեալների նիւթական պէտքերը: Հետզհետէ քրիստոնեաների թիւն աւելանում էր և որքան աւելանում էր, այնքան առաքեալներն օգնականների կարիք էին զգում, որովհետև չէին կարողանում և քարոզել և նրանց պէտքերը հոգալ: Ուստի առաքեալներն առաջարկեցին քրիստոնեայ համայքին—եկեղեցուն՝ ընտրելու իրանց միջից արժանաւորներին, որ օգնեն իրենց: Ընտրուեցան եօթը վկայուած անձն, որոնք կոչուեցան սարկաւազներ, որոց և յանձնուեց եկեղեցու նիւթական պէտքերը հոգալը, իսկ առաքեալներն ազատ քարոզում էին և տարածում քրիստոնէութիւնը: Այսպէս քանի

աւելանում էր եկեղեցւոյ անդամների թիւը, այն-
քան էլ կարիք էր զգացւում նոր պաշտօնեանե-
րի՝ թէ տեսակով և թէ թուով:

Առաքեալները Երուսաղէմից ցրուեցին աշ-
խարհիս զանազան կողմերը քարոզելու ամբողջ
մարդկութեանը Քրիստոսի աւետարանը: Դրան-
ցից երկուսն էլ՝ Թադէոս և Բարդուղիմէոս եկան
Հայաստան, քարոզեցին մեր հեթանոս պապերին
քրիստոնէութիւնը և դարձան Հայաստանի առա-
ջին լուսաւորիչները:

Առաջին անգամ Թադէոսը եկաւ Եդեսիա
քաղաքը և Հայաստանի Աբգար թագաւորին իւր
պալատականներով և քաղաքացիներից շատերին
մկրտեց: Այստեղ ևս կազմուեց մի նկենդնի՝
ինչպէս Երուսաղէմում: Բայց երբ Թադէոսը հե-
ռացաւ Եդեսիայից և գնաց Վերին Հայաստան
ևս քարոզելու, Եդեսիայի քրիստոնեաների վրայ
հովիւ նշանակեց թագաւորի թագ շինող Ադդէին,
որ հսկէ և հովուէ եկեղեցին, որպէսզի սրանք
չհեռանան քրիստոնէութիւնից և նորից կռապաշտ
չդառնան: Այսպէս քրիստոնէութիւնը հետզհետէ
տարածուեց Հայաստանում մինչև հայոց երկրորդ
լուսաւորիչ Սուրբ Գրիգորի օրերը: Որքան քրիս-
տոնեաների թիւն աւելանում էր, այնքան էլ նրան
ծառայող՝ նուիրուած հովիւների թիւն էլ բազ-
մանում էր՝ թէ թուով և թէ տեսակով: Այս հո-

վիւնները իրանց անձը նուիրում էին եկեղեցու հո-
գևոր զաստիարակութեանը, քրիստոնեայ ժողո-
վրդի ծառայութեանը: Այսպէս հետզհետէ կազ-
մուեց Հայաստանեայց եկեղեցուն նուիրւողների
մի դասակարգ, որը և կոչւում է նուիրապետու-
թիւն Հայաստանեայց եկեղեցւոյ:

Եկեղեցու նուիրապետութիւնը բաղկացած է
հետեւեալ տեսակ կարգաւորներից— 1. կաթողի-
կոս, 2. եպիսկոպոս, 3. վարդապետ, 4. քահա-
նայ, 5. սարկաւազ, 6. կիսասարկաւազ, 7. ջահ-
ընկալ, 8. երգմեցուցիչ, 9. դպիր և 10. դռնապան:

Նուիրեալները կամ հոգևոր պաշտօնեաները
բաժանւում են երկու կարգի— 1. Սրբազնագործ
և 2. ստորին պաշտօնեաներ: Սրբազնագործ այն
պաշտօնեաներն են, որոնք քարոզում, մկրտում,
պատարագ անում և օրէնքներ են կատարում
(կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ,
և աւագ սարկաւազ), իսկ ստորին պաշտօնեանե-
րը նրանք են, որոնք ծառայում են առաջիննե-
րին սրբազնագործութեան ժամանակ (սարկա-
ւազ, կիսասարկաւազ, ջահընկալ, երգմեցուցիչ,
դպիր, դռնաբան):

Հոգևոր պաշտօնեաներից ոմանք ամուրի,
կուսակրօն և ոմանք՝ ամուսնացած են: Ամուրի
պաշտօնեաներն են— կաթողիկոս, եպիսկոպոս,
վարդապետ և սարկաւազ (վարդապետացու, վա-
նական), իսկ ամուսնացածները՝ քահանայ, սար-

կաւագ (քահանայացու): Առաջինները իրաւունք
չունին ամուսնանալու, իսկ վերջինները՝ պար-
տաւոր են: Մնացեալները — կիսասարկաւագ, գը-
պիր, երգմեցուցիչ, ջահընկալ, դռնապան, կա-
րող են և ամուսնանալ և ամուրի մնալ:

Սրբազնագործ պաշտօնեաների պարտաւո-
րութիւնն է ընդհանրապէս — 1. քարողել հօտին
Քրիստոսի աւետարանը, 2. հսկել նրանց բարո-
յական պարտաւորութեան վրայ, որ սրանք քա-
րողուած զաղափարների համաձայն կեանք վա-
րեն, 3. հսկել որ եկեղեցւոյ կանոնները ճշտու-
թեամբ գործադրուեն և 4. կատարել ժողովրդի
ծխական կարիքները (մկրտել, պսակել, թաղել...):

Ի մօտոյ ծանօթանանք Հայաստանեայց ա-
ռաքելական եկեղեցու պաշտօնեաներից՝ նուրի-
րեալներից իւրաքանչիւրի հետ:

1. Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ո Ս

Սա եկեղեցու ամենամեծ պաշտօնեան է. նա
կոչւում է նաև Ընդհանուր Հայրապետ, Եպիսկո-
պոսապետ, Բահանայապետ, Հովուապետ, Հոգևոր
տէր և Ժայրագոյն Պատրիարք: Ներկայումս երեք
կաթողիկոսութիւն ունինք (Էջմիածնի, Սսի և Աղ-
թամարի): Առաջինը նստում է Էջմիածնայ վան-
քում, երկրորդը՝ Կիլիկիայի Սիս քաղաքում, իսկ
երրորդը՝ Վանայ ծովակի Աղթամար կղզու վրայ:
Էջմիածնի կաթողիկոսը կոչւում է Կաթողիկոս
ամենայն հայոց, իսկ Սիս նստող կաթողիկոսի իրա-

ւունքը տարածւում է միայն Կիլիկիայի հայերի
վրայ, ուստի և կոչւում է Կաթողիկոս տանն Կիլի-
կիոյ: Աղթամարի կաթողիկոսի իրաւունքը տարած-
ւում է Վանայ ծովակի մէջ գտնուող երեք կղզիներ
ի (Լիմ, Կտուց և Աղթամար) և մի քանի գիւղե-
րի վրայ, որոնք գտնւում են ծովակի ափերում,
ուստի և նա կոչւում է Աղթամարի կաթողի-
կոս: Թէ Սսի և թէ Աղթամարի կաթողիկոսները
մասնաւոր կաթողիկոսներ են — սրանց իրաւունքը
տարածւում է միմիայն իրանց թեմերում:

Երեք կաթողիկոսներն էլ ընտրւում են ցմահ:

Ընտրութիւն — Հայերը ներկայումս գտնւում
են գլխաւորապէս երեք պետութեան իշխանու-
թեան տակ — Ռուսաստանի, Տաճկաստանի և
Պարսկաստանի: Բացի դրանից՝ հայերը ցրուած
են աշխարհիս զանազան կողմերում — Ասիայում
(Հնդկաստան), Եւրոպայում, Աֆրիկայում (Ե-
գիպտոս) և Ամերիկայում: Այդ երկրների զանա-
զան վիճակներից ընտրւում են հոգևորական և
աշխարհական պատգամաւորներ, որոնք հաւաք-
ւում են անպատճառ Էջմիածնում՝ կաթողիկոսի
մահից մի տարի ետոյ և Միածնի իշման տե-
ղում ընտրւում են հայոց ընդհանուր կաթողիկո-
սին: Այսպէս էլ ընտրւում են միւս կաթողիկոս-
ները իրանց թեմերում:

Օծում — Ընտրութիւնից ետոյ կաթողիկոսը
հրապարակով երգւում է Էջմիածնի տաճարում,

որ նա անշեղ կհետևի հայաստանեայց առաքելական եկեղեցու դաւանութեան և եկեղեցական կանոններին, իրենից ինքնագլուխ ոչինչ չի անի: Եթէ կարիք լինի մի նոր կանոն մտցնելու կամ փոփոխութիւն անելու, պարտաւոր է ազգային-եկեղեցական ժողով հրաւիրելու և բոլորի մասնակցութեամբ որոշում կայացնելու: Երգումից ետոյ 12 եպիսկոպոս ս. միւլոնով օծում են նրա գագաթը բութ մատով, վրան ձգում են հայրապետական քողը՝ իբրեւ նշան հայրապետութեան:

Իրաւունքներ — Կաթողիկոսն ունի զանազան իրաւունքներ, գլխաւորները սրանք են — 1. Միւլոն օրհնել, 2. ձեռնադրել եպիսկոպոս, 3. պարգևատրել և պատժել բոլոր յանցաւոր հոգևորականներին, 4. նշանակել և արձակել վիճակաւոր առաջնորդներին, 5. թոյլատրել և արգելել կրօնական գրքեր, 6. հսկել որ եկեղեցու կանոնները ճշտութեամբ կատարուեն, 7. հսկել հայ ազգի կրօնական դաստիարակութեան և նրա հոգեւոր, ծխական դպրոցների կառավարութեան:

Ընդունելութիւն — Երբ կաթողիկոսը ուղևորւում է մի տեղ՝ նրա առաջից գնում են երկու ձիաւոր հոգևորականներ, որոնցից մէկը բռնած ունի հայրապետական գաւազանը, իսկ միւսը՝ խաչը: Երբ մօտենում է այն տեղին, ուր պիտի իջնի, տեղ չհասած՝ կաթողիկոսն իջնում է կառքից և մտնում է քառանկիւնի ամպհովանու տակ:

որի չորս սիւնից բռնում են պատուաւոր քաղաքացիք: Հանդիսի առաջից ճանապարհ են ցոյց տալիս երկու աշխարհական մարդիկ՝ կարմիր շորեր հագած (շաթիրներ), ձեռներին գնդաձև գաւազան: Աջ և ձախ կողմից գնում են հոգևորականները՝ շուրջառ ձգած, մէջ տեղից երգեցիկ խումբը երգում է «Հրաշափառ» շարականը: Կաթողիկոսի առջևից երկու սարկաւազ՝ չորս անկիւնից բռնած՝ տանում են կաթողիկոսական քօղը, որին խնկարկում են երկու կամ չորս ուրիշ բուրվառակիր սարկաւազ: Այս ձևով հանդէսը շարժւում է մինչև եկեղեցի, ուր կաթողիկոսը կարճատև աղօթքից ետոյ՝ գնում է հանգստանալու:

2. ԵՊԻՍԿՈՊՈՍ (ԱՐԲ-ԵՊԻՍԿՈՊՈՍ, ԲՈՒ-ԵՊԻՍԿՈՊՈՍ)

Հնումը, ինչպէս և այժմ Տաճկաստանում, եպիսկոպոսացուին ընտրում էր վիճակի ժողովուրդը և հոգևորական դասը, ապա առաջարկում էր կաթողիկոսին ձեռնադրելու: Եթէ կաթողիկոսը համոզուած էր իր ընտրեալի արժանաւորութեանը, նրան ձեռնադրում էր էջմիածնի տաճարում — տալով նրա ձեռքը հովուական օճաձեւ, նրկզխանի գաւազան և ճկոյթ մատին դնելով եպիսկոպոսական մատանի: Գաւազանը իշխանական նշան է, իսկ մատանին նշանակում է, թէ նա ամուսնանում է վիճակի հետ ցմահ՝ հովուելու իւր հօտը:

Եպիսկոպոսը կոչւում է նաև թեմակալ, վիճակաւոր առաջնորդ: Նրա պարտականութիւնն է

— 1. կառավարել իւր վիճակի՝ թեմի հօտը, 2. հսկել նրա բարոյական պարտաւորութեան վրայ, 3. հետեւել որ անշեղ կատարուին եկեղեցական կանոնները իւր վիճակում, 4. հսկում է հոգևոր դպրոցների վրայ:

Եպիսկոպոսն իրաւունք ունի իւր թեմում—

1. ձեռնադրել վարդապետ, քահանայ՝ կաթողիկոսի հաւանութեամբ և ստորին պաշտօնեաներ, 2. եկեղեցի և սրբոց պատկերներ օծել:

Լրբ-եպիսկոպոսը նոյնն է՝ ինչ որ եպիսկոպոսը— արքութիւնը մի տիտղոս է, պարզ և միայն: Եթէ վիճակաւոր եպիսկոպոսը իւր իշխանութեան ներքոյ ունի ստորագրեալ եպիսկոպոս (յաջորդ՝ փոխանորդ), այդպիսին կոչւում է քոր-եպիսկոպոս:

3. ՎԱՐԴԱՊԵՏ (ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ)

Վարդապետ բառացի նշանակում է ուսուցիչ— սա գիտնական տիտղոս է: Վարդապետը գիտութեան պաշտօնեայ է: Ըստ կոչման և ի պաշտօնէ պարտաւոր է շրջել քրիստոնեայ համայնքներում և քարոզել աւետարանը: Եթէ վարդապետը առանձին քարոզչական ձիրք ունի, նրան մասնաւորապէս իրաւունք է տրւում քարոզելիս օձաձև գաւազան բռնելու: Քարոզիչ վարդապետներից ոմանք կոչւում են ծայրագոյն վարդապետ—սա պատուոյ մի տիտղոս է՝ ինչպէս և արքութիւնը:

կաթողիկոսը, եպիսկոպոսը և վարդապետը գլխին վեղար են կրում:

4. ՔԱՀԱՆԱՅ (ԵՐԵՅ, ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ, ԱԻԱԳ ԵՐԵՅ)

Քահանան կամ երեցը ընտրւում է որ և է մի եկեղեցու ժողովրդից (ծուխ): Նա պէտք է մաքուր վարք ունենայ և գիտակ սուրբ գրքի գաղափարներին: Ընտրեալին ծուխն առաջարկում է վիճակաւոր առաջնորդին, որը տեղեկանում է նրա բարք ու վարքի մասին, քննում է նրա հոգևոր գիտութիւնը և եթէ բաւարար է գտնում, ձեռնադրում է: Ձեռնադրելիս իրաւունք է ստանում սև փիջօն ծածկել. տալիս է նուիրեալի ձեռքը սկիզբ, մաղձման և պատարագչի բոլոր զգեստները (փորուբար, դոտի, բազպաններ, շուրջառ, նոյնպէս սաղաւարտ և վակաս), որով նա իրաւունք է ստանում պատարագ մատուցանելու:

Ձեռնադրելիս եպիսկոպոսը քահանային եօթըն աստիճան (կարգ) է տալիս— 1. դռնապանութիւն, 2. դպրութիւն, 3. ևրմանցչութիւն, 4. ջահընկալութիւն, 5. կիսասարկաւագութիւն, 6. սարկաւագութիւն և 7. քահանայութիւն:

Ձեռնադրութիւնից յետոյ նորընծայ քահանան իրաւունք է ստանում— 1. քարոզելու, 2. մկրտելու, 3. խոստովանեցնելու, 4. հաղորդելու, 5. պսակելու, 6. թաղելու և այլ հոգևոր պիտոյքներ հոգալու: Օծումն ընդունելուց ետոյ նորընծան քառասուն օր առանձնանում է եկեղեցւոյ

սենեակը (խուց) և այդ ժամանակամիջոցում՝ վարժուժ է գլխավորապէս ծխական պարտաւորութեանց մէջ, որից ետոյ մատուցանում է իւր առաջին պատարագը:

Ուր եկեղեցում մի քանի քահանաներ կան՝ աւելի արժանաւորին կամ վաղ ձեռնադրուածին նշանակում են մեծ՝ աւագ—այդպիսին կոչւում է աւագ քահանայ կամ աւագ նրից:

Քահանան, վարդապետը, եպիսկոպոսը և կաթողիկոսը ամենքն էլ եօթն աստիճան ունին:

5. Ս Ա Ր Կ Ա Ի Ա Գ

Քահանայացու սարկաւազին ևս մի որ և է եկեղեցու ծուխ առաջարկում է վիճակաւոր եպիսկոպոսին ձեռնադրելու: Երբ առաջնորդը արժանաւոր է գտնում՝ թէ բարբ ու վարքի և թէ հոգևոր գիտութեան մէջ, ձեռնադրում է և իրաւունք է տալիս 1. ծախ ուսին ուրար կրելու, որ նշանակում է թէ նա աւետարանի լուծը չէ կարող ամբողջապէս կրել, այլ մասամբ միայն, 2. տալիս է Աւետարանը և պատուիրում է կարգալ ժողովրդին, որ նա լսէ, 3. քուրվաոր դնում է ձեռը և իրաւունք է տալիս խնկարկելու:

Սարկաւազը ծառայում է եպիսկոպոսին և քահանային պատարագի ժամանակ—նա աւետարան է կարդում և հաւատամք ասում, սկիհը ընծայարանից վերաբերում է ու տալիս է պատարագչին: Սարկաւազն ունի վնց աստիճան:

6. Կ Ի Ս Ա Ս Ա Ր Կ Ա Ի Ա Գ

Կիսասարկաւազին ևս ձեռնադրում է եպիսկոպոսը և իրաւունք է տալիս ծախ քաղվի վրայ ուրար կրել. որ նշանակում է թէ նա սարկաւազից աւելի անգոր է աւետարանի լուծը կրելու: Սրա պարտաւորութիւնն է պատարագիչ քահանային զգեստաւորել, դատարկ սկիհը և մագման տանել խորհրդանոց, սպասաւորել պատարագին, սկիհ երեսի քողը (գուրբուրա) լուալ, շուրն ածել աւագանի մէջ, աւետարանի թաշկինակը (շուշփայ) կոնքը, սեղանի սփռոցը և պատարագչի զգեստները մաքուր պահել:

7. Զ Ա Հ Ը Ն Կ Ա Լ

Սրան ևս ձեռնադրում է եպիսկոպոսը—հագնում է ժամաշաւիկ, ձեռք տալիս է վառած մոմ և դատարկ բաժակաման, որ նշանակում է թէ նա իրաւունք է ստանում եկեղեցու ջահերը վառելու, պատարագի համար բաժակ (գինի) պատրաստելու: Ջահընկալն ունի չորս աստիճան:

8. Ե Ր Դ Մ Ն Ե Յ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս կարգն ընդունողին ևս ձեռնադրում է եպիսկոպոսը և իրաւունք է տալիս որ հասակաւոր մկրտուողներին վրայ երդմամբ ազդէ, որպէսզի նրանք իսպառ հրաժարուեն թէ հոգևոր և թէ մարմնաւոր յանցանքներից: Աստիճան տալիս նուիրեալի ձեռք տալիս են Մաշտոց կոչուած գիրքը, որի մէջ գրուած է, թէ ինչպէս պէտք է

մկրտուողին նրդմնեցնեն՝ չարից (դեհից, սատանայից) յանցանքից հրաժարուելու: Սա ունի նրնք աստիճան:

9. ԴՊՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԸՆԹԵՐՅՈՂՈՒԹԻՒՆ

Նոյնպէս ձեռնադրում է եպիսկոպոսը. ձեռին տալիս է Շաշոց կոչուած եկեղեցական գիրքը, ուր գրուած է նաև առաքեալների գործերը, քարոզութիւնները: Սրանով իրաւունք է տրուում նուիրեալին, որ առաքեալների գրուածները կարդայ և նոյնը ուսուցանէ ժողովրդին: Սա ունի նրկու աստիճան:

Ներկայումս այդ կարգի նուիրեալները կոչուում են դպիրներ՝ տիրացուներ:

10. Դ Ո Ն Ո Պ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հին ժամանակ նուիրեալին ձեռնադրում էր եպիսկոպոսը, ձեռին տալով եկեղեցու քա՛ալինները, և իրաւունք էր տալիս դռները քանալ հաւատացեալների համար միայն, իսկ չմկրտուածներին ներս չթողնել: Դռնապանը պարտաւոր էր եկեղեցին մաքուր պահել, արթուն լինել, հսկել որ ոչինչ չկորչի, բարեպաշտ լինել, իւր պաշտօնին արի և կոչնակով կամ զանգակներ խփելով հաւատացեալներին յիշեցնել, որ աղօթքի գան: Երբ հաւատացեալները վերջացնում էին աղօթքը և հեռանում, դռնապանը զգուշութեամբ պիտի կողպէր դռները, Սա ունէր մի աստիճան:

Ներկայումս դռնապանին անուանում են ժամահար, ժամկոչ:

Յ Ա Ն Կ

Ա. Հիշ-ուխտ

	ԵՐԵՍ
1. Սաւուղը թագաւոր է դառնում . . .	3
2. Սաւուղի անհնազանդութիւնը . . .	6
3. Դաւթի թագաւոր ընտրուելը . . .	7
4. Դաւթը դալիս է Սաւուղի արքունիքը . . .	9
5. Դաւթ և Գողիաթ	10
6. Սաւուղն ասում է, իսկ Յով. սիրում է Դաւթ . . .	13
7. Դաւթի մեծահոգութիւնը դէպի Սաւուղ . . .	19
8. Սաւուղի մահը	21
9. Դաւթը դառնում է թագաւոր . . .	23
10. Դաւթը մեղանչում է	27
11. Աբիսողոմ	29
12. Դաւթի մահը	33
13. Սողոմոնը դառնում է թագաւոր . . .	33
14. Սողոմոնի տաճարի շինութիւնը . . .	37
15. Սողոմոնի փառքը, անկումը և մահը . . .	40
16. Յերոբոամ և Ռոբովամ	41
17. Եղիա	44
18. Եղիայի մահը	50
19. Իսրայէլի և Յուդայի թագաւոր. կործան. . .	51
20. Բաբելոնի գերութիւնը և վախճանը . . .	55
21. Համառօտագոյն հայեացք ցՔրիստոս . . .	61

Բ. Եոր-ուխտ

22. Փարիսեցին և մաքսաւորը	63
23. Չար ծառայի առակը	65

24. Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը	67
25. Այգու մշակների առակը	69
26. Ողորմած Սամարացու առակը	71
27. Յովհաննէս Մկրտիչ	73
Գ. Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատոյ հանգա- նակը—դասանութիւնը	
28. Հաւատամքի բնագիրը	77
29. Հաւատամքի համառօտ բացատրութիւնը	79
Դ. Նուիրասլնտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	
30. Կաթողիկոս	86
Եպիսկոպոս	89
Վարդապետ	90
Քահանայ	91
Սարկաւազ	92
Կիսասարկաւազ	93
Զահրնկալ	93
Երդմնեցուցիչ	93
Դպիր	94
Դռնապան	94



ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՐՕՆԻ
ՀԵՏԵԻՆԱԼ ԴԱՍԱԳՐԵՐԸ

I. ՈՒՍՈՒՑՉԱՅ ՀԱՄԱՐ

ՍՏՈՐԻՆ ՇՐՋԱՆ		ԳԻՆԵ Է		ՁԵՂՔ
		Ռ.	Կ.	
1.	Ուղեցույց Հին-Ուխտի մասն Ա.	.	80	25
2.	Ուղեցույց Հին-Ուխտի մասն Բ.	.	85	25
3.	Ուղեցույց Նոր-Ուխտի մասն Ա.	1	»	35
4.	Ուղեցույց Նոր-Ուխտի մասն Բ.	1	5	35

ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆ				
5.	Դասագիրք կրօնի հատ. Դ.	1	50	35
6.	Դասագիրք կրօնի հատ. Ե.	»	50	35
7.	Տասն պատուիրան	»	50	35

II. ԱՇԱԿԵՐՏԱՅ ՀԱՄԱՐ

8.	Դասատետր կրօնի Ա. տարի . . .	»	27	25
9.	Դասատետր կրօնի Բ. տարի . . .	»	25	25
10.	Դասատետր կրօնի Գ. տարի . . .	»	25	20
11.	Դասատետր կրօնի Դ. տարի . . .	»	30	25
12.	Հին-Ուխտ տաճկահայ բարբառով . . .	»	40	25
13.	Նոր-Ուխտ	»	45	25
14.	Գործք առաքելոց	»	45	25
15.	Բարոյախօսութիւն (էթիկալ) . . .	»	50	25

ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ—

1. Ինձ—Սահակ ա. քհ. Սահակեանց. Бебутовская ул. № 20
2. Տիխաի բոլոր հալ գրավաճառներին:

Գինն է 30 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0157210

H | APM.

2-8242.